**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ



«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Կարեն Մնացականյան

Երևան
2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր ........ 4
2.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը ........ 4
3. Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացը ........ 9
4.Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը, նախնական գնահատման հայտի մշակման հիմքը ........ 9
5. Նախատեսվող գործունեության նպատակը ........ 9
6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը ........ 12
6.1Ենթակա տարածք. ........ 12
6.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը ........ 15
6.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ. ........ 15
6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն ........ 16
6.2.3. Կլիմա և օդային ավազան ........ 17
6.2.4 Հողային ռեսուրսներ: ........ 19
6.2.5 Ջրային ռեսուրսներ: ........ 21
6.2.6. Բուսական և կենդանական աշխարհ: ........ 26
6.2.7 Հատուկ պահպանվող տարածքներ: ........ 31
6.2.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ: ........ 31
6.2.9Բնության հուշարձաններ ........ 31
6.2.10 Սոցիալական. ........ 34
7.Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները ........ 35
7.1 Տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները. ........ 36
7.2 Տարածքի կառուցապատում: ........ 39
7.3 Հողային աշխատանքներ. ........ 44
7.4 Էլեկտրամատակարարում. ........ 47
7.5 Ջերմամատակարարում. ........ 47
7.6 Ջրամատակարարում. Ջրահեռացում. ........ 47
7.7 Աղբահանություն ........ 49
7.8 Լողափի կահավորում: ........ 49
7.9 Կանաչապատում, բարեկարգում. ........ 50

7.10 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր. 51
7.11 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. 55
8. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բնութագրերը 55
8.1 Օդային ավազան. 55
8.2 Հողային ռեսուրսներ. 56
8.3 Ջրային ռեսուրսներ. 56
8.4 Կենսաբազմազանություն. 57
8.5 Թափոններ. 57
8.6 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն. 58
8.7 Սոցիալական. 58
8.8 Բարեկարգում 59
9.Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական(կառավարման) միջոցառումների ծրագիրը 60
9.1 Օդային ավազան. 60
9.2 Հողային ռեսուրսներ. 61
9.3 Ջրային ռեսուրսներ. 61
9.4 Կենսաբազմազանություն. 62
9.5 Թափոններ. 63
9.6 Աղմուկ և թրթռում 64
9.7 Արտակարգ իրավիճակներ. 64
9.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն 64
9.9 Սոցիալական 65
9.10 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում. 65
10.Մոնիթորինգ 66
11. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան 67
12.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ 77
Օգտագործված հապավումները 79
Գրականություն 79

## 1. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

**Հավելված 1.** Քաղաքացի Իլոնա Հարությունյանի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագիր
**Հավելված 2.** ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/
**Հավելված 3**. Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ
**Հավելված 4**. Տարածքի կոորդինատները ARM WGS-84 համակարգով
**Հավելված 5.** Աղբահեռացման պայմանագիր
**Հավելված 6**. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկը
**Հավելված** 7. Համայնքի նախնական համաձայնությունը

## 2.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀօրենքը (2014) (այսուհետ Օրենք)-կարգավորում է հիմնադրութային փաստաթղթերի(ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատումները(ՇՄԱԳ): Կարգավորում է նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)-Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում:
- «Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման

հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)-սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում՝ պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- «Բուսական աշխարհի մասին» (1999) ՀՀ օրենք-նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)–նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:
- «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և

հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին(21.12.2015թ.) ՀՀ օրենք-կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) - նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

**ՀՀ կառավարության որոշումներ.**

- **«**ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների

հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ճևաբանությունը:

- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշումը-սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 9-ի N80-Ն որոշում- «Հայաստանի հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» -սահմանում է ՀՀ հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման 5-րդ հավելվածի:
- ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշում- ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»- սահմանում է ՀՀ հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման 5-րդ հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն ՀՀ կառավարության որոշում – Սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշում – Հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:
- 5.8 ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ:
- ՀՀ կառավարության 2008թ.դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշում «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ,

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

- ՀՀ կառավարության 2002թ. N 57 որոշում ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ԿԵՆՍԱԾԻՆ ՏԱՐՐԵՐԻ, ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
- ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014թ. «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում՝ «Սևան» ազգային պարկի կանոնադրություն»:
- «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստաման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 30.09.2020թ. թիվ 1293-Լ որոշում՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնական զարգացման և օգտագործման 2020թ. միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին»:
- 2004 թվականի N 766-Ն 13 մայիսի «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 1908.0 ՄԵՏՐ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԻՑ ՑԱԾՐ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 927-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
- ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» :
- ՀՀ կառավարության 2011թ. 27 հունվարի N 75-Ն որոշում՝ «ԿԱԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
- ՀՀ կառավարության 29 սեպտեմբերի 2022 թվականի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1520 – Ն որոշում:
- ՀՀ կառավարության 30 սեպտեմբերի 2021 թվականի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1584 – Ն որոշում
- ՀՀ կառավարության 23 մարտի 2006 թվականի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» N 397-Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

- ՀՀ կառավարության 8 հոկտեմբերի 2009 թվականի «ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿՈՅՈՒՂԱՑԱՆՑ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՈՅՈՒՂԱՋՐԵՐԻ ՏԵՂԱՅԻՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1142-Ն որոշում:

## 3. Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի ՀՀ օրենքով (այսուհետ Օրենք) սահմանված դրույթներին համապատասխան: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք կարող են ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: «ՍևանՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-ին պատկանող թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և նախնական գնահատման հայտը շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Գ կատեգորիայի ընթացակարգով:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.

3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.

4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.

6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

## 4.Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը, նախնական գնահատման հայտի մշակման հիմքը

Նախատեսվող գործունեությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգումը և

կառուցապատումը, իրականացվելու է «Սևան» ազգային պարկի 41-րդ տարածքային հատվածի, Սևանա լճի կենտրոնական Լճաշեն բնակավայրի ռեկրեացիոն գոտում: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Սևան»ԱՊ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ Գեղարքունիքի մարզ, Սևան Կարմիր Բանակի փող., 56 շենք:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Լճաշեն և Չկալովկա գյուղեր միջև՝ Երևան քաղքից 62,7կմ հեռավորության վրա: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 13418մ2:

Նախնական գնահատման հայտը մշակվել է հիմք ընդունելով.

- Իլոնա Հարությունյանի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 14.06.22թ. N 2022/01 պայմանագիրը(Հավելված 1.):
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքի**)**, հավելված 2
- նախագծային փաստաթղթերը
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

## 5. Նախատեսվող գործունեության նպատակը

Նախատեսվող գործունեության նպատակն է «Սևան» ազգային պարկի տարածքում՝ Լճաշեն բնակավայրի Սևանա լճի ափամերձ հատվածում թիվ 5 հանրային լողափի կազմակերպումն է՝ հանգստի գոտու բնակչության և զբոսաշրջիկների երկարաժամկետ և կարճաժամկետ՝ միջսեզոնային հանգիստի համար: Հանգստի գոտու կազմակերպումը կատարվելու է՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Տարածքի ճարտարապետական լուծումները՝ դիրքը և վայրը, հնարավորություն կստեղծեն, թե զբոսաշրջիկներին և թե տեղացիներին իրենց հանգիստը կազմակերպել բնության գրկում, գեղատեսիլ Սևանա լճի ափին:

Հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված:

Նախատեսվող գործունեության վայրի իրադրության սխեման

Նկար 1.



Նկար 2.




## 6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

**6.1Ենթակա տարածք**.

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևանա լճի ափամերձ տարածքում, Սևան ազգային պարկում, տեղակայված է Գեղարքունիքի մարզի Լճաշեն

բնակավայրի վարչական սահմանում՝ Սևանի ավազանի կենտրոնական գոտու՝ փոքր Սևանի հարավ-արևմտյան մասում: Տարածքում առկա է 85 հատ սոճի, որոնք գործունեության իրականացման ընթացքում պահպանվելու են, չեն հատվելու: Արդեն իսկ իրականացվել են տարածքի մաքրման աշխատանքները:

2022թ. մայիսի 19-ին ի թիվս այլ լողափրի, հանրային թիվ 5 լողափում ջրային հանգիստ կազմակերպելու, բարեկարգում և սպասարկում իրականացնելու համար հայտարարվել էր մրցույթ: Հունիսի 9-ին հանձնաժողովի կողմից դիտարկվել են ներկայացված հայտերը և հաղթող է ճանաչվել ներդրումային ծրագրերից մեկը: Լողափը գտնվում է Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Սևան-Գավառ ավտոմայրուղուց դեպի լիճը ընկած ափամերձ հատվածում /1,37 հա/: Լողափը դեպի Գավառ ուղղությամբ օգտագործվում է այլ վարձակալների կողմից:

- Լողափնյա գոտին 1905 նիշից ներքև է, և տարածքում անտառաշերտի մաքրման աշխատանքները կարգավորվում են օրենսդրության համաձայն
- Տարածքը ազատվել է բացառապես չիչխանի մացառներից և մանր թփերից, որևէ ծառ չի հատվել
- Մաքրման աշխատանքներն իրականացվել են «Սևան» ազգային պարկի մասնագետների կողմից:

Տարածքը բլրակային է, առկա է քանդման ենթակա շինություն:

**Սևանա լիճ և «Սևան» ԱՊ**. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա:

Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով:

«Սևան» ազգային պարկը ստեղծվել է ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի «Սևան» ազգային պարկ ստեղծելու մասին» N 125 որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշմամբ «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպվել է համանուն պետական ոչ առևտրային կազմակերպության, հաստատվել են պարկի և կազմակերպության կանոնադրությունները, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1185-Ն որոշմամբ ստեղծվել է «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը, ամրագրվել վերջինիս գործառույթների շրջանակը, կազմն ու գործունեության կարգը:

«Սևան» ազգային պարկի» (այսուհետև՝ պարկ) գործունեության նպատակը՝ պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է: Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքների հողեր են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակներին հակասող գործունեություն: Պարկի սահմաններում վարձակալության կամ կառուցապատման իրավունք ունեցող հողօգտագործողները, հողամասերի վրա կառուցված շենքերն ու կառույցները պետք է օգտագործվեն իրենց նշանակությանը համապատասխան՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Համաձայն կառավարման պլանի՝ «Սևան» ազգային պարկի տարածքը Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147 456 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22 697 հա:

2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Սևան» ԱՊ-ի տարածքը կազմում է 22584.25 հա: Ռեկրեացիոն գոտու ընդհանուր մակերեսը 4753 հա է, որն ընդգրկում է միայն ցամաքային տարածք: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» N927-Ն Որոշման՝ զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, ինչպես նաև 1905 նիշից բարձր տարածքներում կապիտալ և ոչ հիմնական կառուցապատումը՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումներին համապատասխան, պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են Ռեկրեացիոն գոտու վարձակալված տարածքներում քաղաքաշինական գործունեությունը թույլատրվում է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի  մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ» (այսուհետ որոշում) Տարածքը տեղակայված է «Լճաշեն» տարածքային հատվածում՝ «Սևան»ԱՊ-ի ռեկրացիոն գոտում: Լճաշեն բնակավայրի տարածքը համաձայն որոշման՝ բաժանված է ռեկրացիոն, տնտեսական և արգելոցային  գոտիների: Ազգային պարկի ռեկրացիոն գոտում սահմանվել են թույլատրելի օգտագործման 17 հիմնական գոտիներ՝ նախատեսված հանգստի, առողջարանական, ժամանացային, հյուրանոցային, սպորտային օբյեկտների, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների, ենթակռուցվածքների և այլ գոտիներ կառուցապատման համար, ինչպես նաև բուֆերային գոտիներ:

Սույն հայտով նախատեսվում է 1 հարկանի առավելագույն 4 մ բարձրությամբ շինությունների  կառուցում, որի համար ըստ կառավարության որոշման  1 հարկանի հյուրանոցային, մոթելային, քեմփինգային, քոթեջային կառուցապատման ժամանակ թույլատրվում է մինչև 23% կառուցապատում և 77% կանաչապատում: «Նորաշեն-Չկալովկա» կառուցապատման հատվածում Սևանա լճի հայելու մակարդակի բարձրացումից հետո առաջացել են ավտոմայրուղուն հարող ծովախորշեր:

Կառուցապատվող հատվածների հատակագծային լուծումները ընտրվել են բնական միջավայրին համահունչ՝ հաշվի առնելով ափի ուրվագիծը, ռելիեֆի ուղղվածությունը,

ինսոլյացիայի պայմանները, քամիների ուղղվածությունն ու ուժգնությունը և առկա հատակագծային կառուցվածքը:

Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ տարածքային հատվածը բարենպաստ է սեյսմիկայի, կլիմայի, ռելիեֆի տեսանկյունից: Այն գոտևորվել է 1 հարկանի կառուցապատման հատվածների (հյուրանոցային) (ՀԿԳ-3), ժամանցային օբյեկտներով կառուցապատման հատվածների, հասարակական սպասարկման և սննդի, ինչպես նաև սպորտի օբյեկտներով կառուցապատման հատվածների համար: Լողափի գոտու(ԼԳ) և այլ գոտիների միջև նախատեսված է բուֆերային գոտի:

Նախատեսվող գործունեության համար ընտրված տարածքը կից է Սևանա լճի առափնյա այլ հանգստյան գոտիներին:

Գործունեության ենթակա ամբողջ տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում:

Տարածքի կլիման. գործունեության տարածքի տաք սեզոնը տևում է 3,6 ամիս, հունիսից-սեպտեմբեր, առավելագույն միջին օրական ջերմաստիճանը՝ 19°C: Տարվա ամենաշոգ ամիսը հուլիսն է, միջին ջերմային առավելագույնը՝ 24°C , նվազագույնը՝ 13 °C: Ցուրտ սեզոնը տևում է 3,3 ամիս՝ նոյեմբերից-մարտ. միջին օրական ջերմաստիճանը՝ 2 °C: Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է. միջին ջերմային առավելագույնը՝ -13 °C, իսկ նվազագույնը՝ -3 °C:

Տարվա անձրևային ժամանակահատվածը տևում է 7,1 ամիս՝ ապրիլից-նոյեմբեր: Անձրևային տեղումները սահող 31 օրյա ժամկետում 13 միլիմետրից ոչ պակաս են:

## 6.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

### 6.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.

Թիվ 5 հանրային լողափը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Սևանա լճի ափամերձ հատվածում: Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքներին բնորոշ են հրաբխային կառուցվածքով ռելիեֆը՝ մինչև լիճը ձգվող ծովախորշերով, հրվանդաններով, քարաբեկորներով: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

Ռելիեֆը անհարթ բլրային է, խորը ձորակներով: Սևանա լճի կենտրոնական գոտու ավազանը ունի ոչ միայն բարդ գեոմորֆոլոգիական կառուցվածք, այլ նաև բարդ հետերոգեն տեկտոնական կառուցվածք: Սևանի ավազանի ամենահին առաջացումներն են համարվում բյուրեղային թերթաքարերը, որոնք երկրի մակերևույթին մերկանում են Սևանի ավազանից դուրս: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան

ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը:

### 6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:




Մեծ տարածում ունեն տուֆոկոնգլոմերատները, տուֆոբրեկչիաները, պորֆիրիտները և դրանք հատող ինտրուզիաները: Բարձրադիր լանջերը և ջրբաժանները ներկայացված են մերգելներով և կրաքարերով, որոնք աններդաշնակ կերպով տարածված են հրաբխա-նստվածքային կոմպլեքսի վրա:

Դեպի Սևանա լիճ կուտակված առաջացումները ներկայացված են՝ ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով՝ ճալաքարերի ջրատար շերտերով: Ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական

աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես: Ջրամերժ շերտերը հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մագնետիզացված և սերպենտինիտիզացված դունիտները ու սերպենտինիտները), որոնք վերածվել են կավանման առաջացումների: Ապարները պրոլյուվիալ, դելյուվիալ առաջացումներ են: Ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների հետ կապված՝ գրունտային ջրեր, որոնք փոքր բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս Դրախտիկ գետի միջին և վերին հոսանքներում, ունեն սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 600մմ, որոնց մի մասը ներծծվելով ապարների շեղքերով ու ծակոտիկներով, բեռնաթափում են սեզոնային բնույթի աղբյուրների տեսքով, իսկ մյուսը ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Սևանա լիճ:

### 6.2.3. Կլիմա և օդային ավազան

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում), ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության:

Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Սևանա լճի ջրհավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Սևանա լճի կենտրոնական գոտու տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաաննպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանի կարող է իջնել մինչև -36°C:

Քամիների միջին տարեկան արագությունը տատանվում է 1.5-6.0 մ/վրկ: Ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Օդի ջերմաստիճանը, $^{0}C$ Աղյուսակ 1

| Բնակավայրի անվանումը | Բարձրությունը ծովի մակար-դակից, մ | Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C | Միջին տարե-կան | Բացար-ձակ նվազա-գույն | Բացար-ձակ առավե-լագույն |
|---|---|---|---|---|---|

| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սևան ք. | 1937 | -8,2 | -7,4 | -3,3 | 3,5 | 8,8 | 12,1 | 15,7 | 15,7 | 12,2 | 6,4 | 0,6 | -5,5 | 4,2 | -33 | 32 |

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը. % | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | միջինը ժամը 15-ին | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | ամենա-ցուրտ ամսվա | Ամենաշոգ ամսվա |
| Սևան ք. | 81 | 80 | 77 | 72 | 73 | 72 | 70 | 68 | 65 | 69 | 76 | 82 | 74 | 75 | 53 |

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական մմ / օրական առավելագույնը | | | | | | | | | | | | | Ձյան ծածկույթը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | տարե-կան | տասնօրյա առավելա-գույնը, սմ | օրերի թիվը | ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Ք. Սևան | 25/21 | 30/26 | 40/26 | 65/52 | 103/46 | 79/45 | 50/43 | 40/74 | 37/44 | 51/59 | 38/50 | 25/26 | 583/74 | 93 | 136 | 252 |

Աղյուսակ 1.4. **Քամի**

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (hՊա) | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների: Հյուսիսային (Հս) | Հյուսիսարևելյան (ՀսԱր) | Արևելյան (Արլ) | Հարավարևելյան (ՀվԱր) | Հարավային (Հվ) | Հարավարևմտյան (ՀվԱր մ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիսարևմտյան (ՀսԱր մ) | Անհողմությունների կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում: 25 | 50 | 100 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Սևան ք. | 805,5 | հունվար | 3 | 2 | 2 | 2 | 1 | 7 | 58 | 25 | 13 | 4,2 | 3,3 | 25 | 24 | 26 | 28 |
| | | | 4,1 | 4,0 | 3,3 | 2,7 | 2,9 | 5,3 | 5,4 | 3,7 | | | | | | | |
| | | ապրիլ | 5 | 9 | 23 | 8 | 4 | 16 | 28 | 7 | 20 | 3,3 | | | | | |
| | | | 3,9 | 3,7 | 3,2 | 2,5 | 3,8 | 6,3 | 5,5 | 3,4 | | | | | | | |
| | | հուլիս | 18 | 35 | 31 | 6 | 3 | 2 | 3 | 2 | 17 | 3,1 | | | | | |
| | | | 4,7 | 4,1 | 3,2 | 2,7 | 2,1 | 2,5 | 3,1 | 2,8 | | | | | | | |

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Գեղարքունիքի մարզի և քաղաքների օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Իսկ ՀայԷկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի1 ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները2 ժամկետանց են: այնուամենայնիվ ներկայացվում է ՀայԷկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի2 համաձայն մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Ծովազարդ համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները[2]:

- Փոշի՝ 0.2 մգ/մ$^3$;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ$^3$;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ$^3$;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ$^3$:

### 6.2.4 Հողային ռեսուրսներ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանին բնորոշ է մարգագետնասևահողային հողային տիպի սևահող տիպիկ, ալրային կարբոնատային

ենթատիպը: Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են տափաստանային և կարբոնացված անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են կարբոնատային, խճաքարային բերվածքների վրա: Տարածաշրջանում՝ «Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները՝ ավազային, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմանականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր՝ հողագոյացման խոնավ մարգագետնային, ավազային, սապրոպելիտային տափաստանացված, ինչպես նաև զգալի տարածքներ զբաղեցնող թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Իսկ գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան»ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում առկա են լեռնատափաստանային չոր, իսկ 2400մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էռոզիան, ափամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն: «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. 4-րդ եռամսյակի հրապարակված տեղեկագրի՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների, Գեղարքունիքի մարզի և քաղաքների օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը թույլ բլրակային է, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Շրջանը գտնվում է Սևանա լճի ավազանի հյուսիս-արևմտյան մասում և ընդգրկում է Հրազդան գետի նախկին հունի և Չկալովկա գյուղի միջև ընկած տարածքը:

Երկրաբանա-գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանը իրենից ներկայացնում է փոքր խորդուբորդություններով պլատո, լցված լավաների բեկորներով և քարակտորներով (չինգիլներով), տեղ-տեղ ծածկված էլյուվիալ-դելյուվիալ և ալյուվիալ առաջացումների ծածկոցով:

Արմատական ապարները շրջանում չեն մերկանում: Նրանք հայտնաբերված են միայն հորատանցքերով: Նրանք ներկայացված են վերին պլիոցենի հասակի դոլերիտային բազալտներով: Նկարագրվող շրջանը հիմնականում ծածկված է չորրորդական հասակի լավաներով, ներկայացված է վերին պլեյստոցենի-հոլոցենի հասակի անդեզիտա-բազալտներով: Մեծ տարածում ունեն վերին պլեյստոցենի հասակի հրաբխային ավազները և մոխիրը, ինչպես նաև հոլոցենի հասակի ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները:

Ստրուկտուրային տեսակետից շրջանը իրենից ներկայացնում է տեկտոնական-էրոզիոն կիրճ: Կիրճի տեկտոնական ծագման մասին են վկայում լավատակի ապարների դիսլոկացիան և դիաբազների դայկաների առկայությունը: Կիրճի առաջացման մեջ մեծ դեր է ունեցել Պալեոհրազդանի էրոզիոն գործունեությունը:

Շրջանում առանձնացվում են գրունտային ջրերի երեք հորիզոններ, որոնք միմյանցից առանձնացված են ջրամերժ կավային շերտերով: Առաջին երկու ջրային շերտերը տեղադրված են վերին չորրորդականի հասակի օլիվինային բազալտների և շլակների մեջ: Երրորդ ջրային հորիզոնը տեղադրված է էոցենի հասակի հիմնականում քայքայված տուֆոբրեկչիաների մեջ:

**6.2.5 Ջրային ռեսուրսներ:**

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Այս առանձնահատկություններով է պայմանվորված որոշ տեղամասերում միայն գրունտային ջրերի տարածվածությունը, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացխաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ոռոգման նպատակով հորերի ջրածախսի ավելացմաբ:

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում:

**Սևանա լիճ**. նախատեսվող գործունեությունը տեղակայված է Սևանա լճի ափամերձ տարածքում: Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն` այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով` միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան: Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը` 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ$^2$, որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը` 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ$^3$ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի` Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը` Փոքր Սևան, 24-ը` Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ$^3$:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն` այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով` միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում` 80-85%, ամռանը` համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում` 75%:

Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա–Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան–Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թ.):

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Արդյունքում՝ 2003-2010թթ. լճի մակարդակը բարձրացել է 384 սմ, ինչը նախադրյալներ է ստեղծել ջրաէկոհամակարգի և կենսաբազմազանության վերականգնման համար: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ իսկական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Մաքրման կայանների նախատեսումը և ափամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Համաձայն կազմակերպության կողմից 2022թ. 4-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 12 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում:



Ներկայացվում է Սևանա լճի որակական ցուցանիշները 2022թ.դեկտեմբեր ամսվա դրությամբ:

*Դեկտեմբեր*

| Տեղադրություն, խորություն | Ջրի որակի բնութագրիչ | Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների | Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների |
|---|---|---|---|
| Մեծ Սևան, 0.5մ խորություն | Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Մեծ Սևան, 5մ խորություն | ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Մեծ Սևան, 10մ խորություն | ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն | 4-րդ | |
| Մեծ Սևան, 20մ խորություն | ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Մեծ Սևան, 25մ խորություն | ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Մեծ Սևան, 30մ խորություն | ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Փոքր Սևան, 0.5մ խորություն | Ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Փոքր Սևան, 5մ խորություն | Ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ | 3-րդ | 5-րդ |
| | Ամոնիում իոն | 4-րդ | |
| | Նիտրիտ իոն | 5-րդ | |
| Փոքր Սևան, 10մ խորություն | ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն | 4-րդ | |
| Փոքր Սևան, 20մ խորություն | ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր | 3-րդ | 5-րդ |
| | Ամոնիում իոն, ԸԱԱ | 4-րդ | |
| | Նիտրիտ իոն | 5-րդ | |

| Տեղադրություն, խորություն | Ջրի որակի բնութագրիչ | Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների | Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների |
|---|---|---|---|
| Փոքր Սևան, 30մ խորություն | Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ | 3-րդ | 4-րդ |
| | Ամոնիում իոն, մանգան | 4-րդ | |
| Փոքր Սևան, 55մ խորություն | Նիտրիտ իոն, նիտրատ իոն, բոր, ԸԱԱ | 3-րդ | 5-րդ |
| | Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն | 4-րդ | |
| | Մանգան | 5-րդ | |
| Փոքր Սևան, 70մ խորություն | ԹՔՊ, նիտրատ իոն, բոր, ԸԱԱ | 3-րդ | 5-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն | 4-րդ | |
| | Մանգան | 5-րդ | |
| Փոքր Սևան, 80մ խորություն | Նիտրատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր | 3-րդ | 5-րդ |
| | Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն | 4-րդ | |
| | Մանգան | 5-րդ | |

Ներկայացվում է Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը՝ համաձայն Գլխավոր ( www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի:

Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը սեպտեմբերի 5-11-ը. (2022թ.)




**6.2.6. Բուսական և կենդանական աշխարհ:**

Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը:




Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրճուն Սևանի, Ոզնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/Festuca valesiaca Gaudin, F. ovina L., Koeleria albovii Domin, K. cristata (L.) Pers., Bothriochloa ischaemum (l.) Keng, Stipa capillata L., S. Lessingiana Trin. Et Rupr., S. Tirsa Stev., Elytrigia trichophora (Link) Nevski, Galium verum L., տեսակներ Agropyron, Andropogon, Scabiosa, Veronica, Artemisia, Achillea, Astragalus/:

Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ՝ 44 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը, Սևանի բեղլուն և այլն:

Շորժա համայնքում հանդիպում են շնագայլ, նապաստակ, լուսան, թխակապույտ աղավնի, արծաթափայլ որոր և անտառային կատու:

**Բուսական աշխարհ**: Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին տափաստանային է և գորշ կարբոնատային, անտառային: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է:

Նախատեսվող գործունեության տարածքում գերակշռում են հացազգիները և տարախոտային բուսականությունը:

Տարածաշրջանում կենդանիների բնորոշ տեսակներից են՝ ողնաշարավոր կենդանիների 96 (երկկենցաղներ՝ 4, սողուններ՝ 32, թռչուններ՝ 19, կաթնասուններ՝ 41) և անողնաշարների 992 տեսակ (փափկամարմիններ՝ 81, սարդակերպեր՝ 126, միջատներ՝ 785): Անողնաշարների տափաստանային ֆաունան ծագմամբ ավելի երիտասարդ է և համեմատաբար ավելի միատեսակ: Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև հրդեհները բացասաբար են ազդում բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP):

Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ: Մարդու կողմից առավել յուրացված է հենց այս գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր:

Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (Festuca sp.), որոմի (Lolium sp.) 95.1և դաշտավլուկների (Poa sp.) տարբեր տեսակներ:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ Ֆյոդորովի- Cousinia fedorovii Takht, Լրջուն Սևանի-Isatis sevangensis N. Busch, Թրաշուշան հայաստանյան -Gladiolus hajastanicus Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - Iris elegantissima Sosn, Վիշապագլուխ ավստրիական - Dracocephalum austriacum L., Գառնառվույտ հայկական - Oxytropis armeniaca Sosn. ex Mulk.:





**Նկար 4.Վիշապագլուխ ավստրիական** **Նկար 5. Գառնառվույտ հայկական**

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են:

**Կենդանական աշխարհ**: Մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հոդվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (Maculinea nausithous Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Լճում հանդիպում են երկարաչանչ խեցգետին, Սևանի էնդեմիկ իշխանն իր 4 տարատեսակներով, սիգ ձուկը, էնդեմիկ ձկներից՝ Սևանի բեղլուն և Սևանի կողակը: Պատահաբար լիճ է ներթափանցե նաև լճածածանը: Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ, 16 տեսակի սողուններ, հանդիպում են թռչունների 267 տեսակ, կաթնասունների 44 տեսակ,որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

- Միջատակերներ (Insectivora),
- Կրծողներ (Rodentia),
- Նապաստակներ (Logomorpha),
- Չղջիկներ (Chiroptera),
- Գիշատիչներ (Carnivora),
- Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակզաքիսը, անտառային կատուն, բեզոարյան այծը):

Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, սպիտակափոր ժայռային մողեսը, նաիրյան ժայռային մողեսը, ռոստոմբեկովի ժայռային մողեսը, հայկական ժայռային մողեսը, վալենտինի ժայռային մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ. հա ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների մոտ:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ, որոնցից 48-ը բնադրող էին: 160 տեսակ չվող թռչուններից մնացել է 50-ը: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն:

Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում:

Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (Բեզոարյան այծ-Capra aegagrus Erxleben) և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-Eremias arguta transcaucasica Darevsky, 1953) և փոքրասիական մողեսները- Darevskia rostombekovi Darevsky 1957), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր- Larus armenicus), վարդագույն հավալուսն - Pelecanus onocrotalus Linnaeus, 1758 և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - Oxyura leucocephala Scopoli, 1769, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն (Barbus goctschaicus Kessler) և Սևանի կողակը (Varicorhinus capoeta sevangi, Filippi) հոդվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - Maculinea arion zara Jachontov, Մթնշաղային կապտաթիթեռ - Maculinea nausithous, Անտեսված կապտաթիթեռ - Agrodiaetus neglectus Dantchenko, 2000, Նինայի կապտաթիթեռ - Agrodiaetus ninae Forster, 1956, Թուրքական կապտաթիթեռ - Agrodiaetus turcicus Koçak,գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները բացակայում են, նկատի ունենալով, որ տարածքը երկար տարիներ հանդիսանում է լողափնյա հանգստավայր:



Նկար 6.Հայկական որոր




**Նկար 7. Նինայի կապտաթիթեռ**

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

**6.2.7 Հատուկ պահպանվող տարածքներ**:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը տեղակայված չէ պատմամշակութային հուշարձանների սահմաններում, այլ տեղակայված է հատուկ պահպանվող՝ Սևան ազգային պարկի ռեկրեացիոն գոտում: Նախատեսվող հանրային լողափը գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական գոտու 1-ին ենթագոտում՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի 177-Ն որոշման:

Նախատեսվող գործունեության տարածքից մոտ 27 կմ հեռավորության վրա գտնվում է «Արտանիշի» արգելոցը: «Արտանիշի» արգելոցը գտնվում է ազգային պարկի արևելյան մասում, ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

**6.2.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ:**

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Գեղամավան, Վարսեր և Լճաշեն բնակավայրերի վարչական տարածքների համար հուշարձանների ցանկը՝ Լճաշեն գյուղում կան հետևյալ բնական, պատմական, մշակութային հուշարձանները.

**4.4 ԼՃԱՇԵՆ գյուղ**

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԻՇՏԻ Ա-ի | Ք.ա. 776 թ. | գյուղի հս մասում, փոստատան մոտ, ուղղանկյուն կառույցի ներսում | Հ | 16 |
| 2 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ,ԳԱՆՁԱՎԱՆՔԵ | 9-17 դդ. | գյուղից 1.5 կմ հվ-աե, Սևան-Գավառ ճանապարհի ձախ կողմում | Հ | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | (,ԱՆԳԻՐ ՎԱՆՔԵ) | | | | |
| | 2.1 | | եկեղեցի ,Գանձավանքե (,Անգիր վանքե) | 9-10 դդ. | գյուղատեղիի աե կողմում | Ղ | 4.1 |
| 3 | | | ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ ,ԳԵՂՈՒՆԻԵ | Ք.ա. 3-2 հազ. | գյուղից 1 կմ հվ-աե, Սևանա լճի հս-ամ ափին | Ղ | 5 |
| 4 | | | ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ ԼՃԱՇԵՆԻ | Ք.ա. 2-1 հազ. | գյուղից 1.5 կմ հվ-աե, Սևան-Գավառ հին ճանապարհի ձախ կողմում | Ղ | 6 |
| 5 | | | ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՀՌԻՓՍԻՄԵ | 7 դ. | գյուղի մեջ | Ղ | 7: Ենթակայու-թյամբ ներկայացված է 13 հուշար-ձան (7.1-7.13) |
| | 5.1 | | Գերեզմանոց | 10-20 դդ. | եկեղեցու շուրջը | Ղ | 7.14: Ենթակայու-թյամբ ներկայացված է 23 հուշարձան (7.14.1-7.14.23) |
| 6 | | | ԽԱՉՔԱՐ | 9-10 դդ. | գյուղի մեջ, Վաղո Մանուկյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիի բեմին | Ղ | 8 |
| 7 | | | ԽԱՉՔԱՐ | 10 դ. | գյուղի հվ մասում, բարձունքի վրա, ժայռաբեկորին հենած | Ղ | 9 |
| 8 | | | ԽԱՉՔԱՐ | 16 դ. | գյուղի մեջ, Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի մոտ | Ղ | 10 |
| 9 | | | ԽԱՉՔԱՐ | 16-17 դդ. | գյուղի մեջ, Մուրադ Կարապետյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում | Ղ | 11 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | | | ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | | գյուղի մեջ | Տ | 12 |
| 11 | | | ՄԱՏՈՒՌ ՍԲ. ԳԵՎՈՐԳ | վրկնգ. 1911 թ. | գյուղի հվ-աե մասում | Տ | 13: Ենթակայու-թյամբ ներկայացված է 11 հուշար-ձան (13.1-13.11) |
| | 11.1 | | Գերեզմանոց | 9-15 դդ. | մատուռի մոտ | Տ | 13.12: Ենթակայու-թյամբ ներկայացված է 4 հուշարձան (13.12.1-13.12.4) |
| 12 | | | ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ | 19-20 դդ. | գյուղի հվ-աե մասում, գործող գերեզմանոցի տարածքում | Տ | 14: Ենթակայու-թյամբ ներկայացված է 1 հուշար-ձան (14.1) |
| 13 | | | ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ,ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԵ | 9-20 դդ. | գյուղի հվ-աե եզրին, գերեզմանոցի հին թա-ղումների հատվածում | Տ | 15 |
| | 13.1 | | Գերեզմանոց | 9-20 դդ. | | Տ | 15.4: Ենթակայու-թյամբ ներկայացված է 2 հուշարձան (15.4.1-15.4.2) |
| | 13.2 | | Եկեղեցի | 9-10 դդ. | | Տ | 15.1 |
| | | 13.2.1 | Գավիթ | 10-12 դդ. | | Տ | 15.1.1 |
| | 13.3 | | Եկեղեցի | միջնադար | | Տ | 15.2: Ենթակայու-թյամբ ներկայացված է 1 հուշարձան |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 13.4 | | Մատուռ | 19 դ. | | Տ | (15.2.1)<br><br>15.3: Ենթակայու-թյամբ ներկայացված է 2 հուշարձան (15.3.1-15.3.2) |

### 6.2.9Բնության հուշարձաններ

Գեղարքունիքի մարզում և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր:

Գործունեության ենթակա վարչական տարածքում առկա են 2 Երկարաբանական հուշարձաններ.

| | | |
|---|---|---|
| 24. | «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ) | Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք |
| 25. | «Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն | Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ |

Նախատեսվող գործունեության տարածքից հուշարձանները գտնվում են ավելի քան 2կմ հեռավորության վրա:

### 6.2.10 Սոցիալական.

Լճաշեն բնակավայրը գտնվում է Գեղամա և Փամբակի լեռնաշղթաների գոգավորությունում՝ Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Ունի համեմատաբար բարենպաստ կենսապայմաններ, ընդարձակ և հարթ սևահողային տափաստան, որը գյուղի հացի շտեմարանն է: Համայնքի տարածքը կազմում է 5954 հա, բնակչությունը՝ 4329 մարդ: Որպես բնակավայր սկզբնավորվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջին, 1946թ-ի ապրիլին գյուղն անվանվել է Լճաշեն:

Լճաշենի կլիմայի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կազմում է՝ հունվար ամսին օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -30 աստիճան, իսկ օգոստոսին բարձրանում է +300: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է մինչև 600 մմ:

Հարուստ է Լճաշենի բուսաշխարհը (բացված գրունտների բույսեր, արմատական ափամերձ բույսեր, ալպյան գոտու բույսեր/, հաշվվում է շուրջ 1600 բուսատեսակ, որոնցից

1500-ը ծաղկավոր բույսեր են: Գյուղում, բացի հայկական և իրանական տեսակներից, կան նաև բույսերի էնդեմիկ տեսակներ: Դրանց մեջ քիչ չեն նաև դեղաբույսերը:

Հացազգի մշակաբույսերից գյուղում աճեցնում են աշնանացան ցորեն, գարնանացան գարի, վարսակ, հաճար, աճեցնում են նաև կարտոֆիլ:

**Պատմամշակութային և բնության հուշարձանները.** Գյուղի տարածքը համարվում է թանգարան՝ բաց երկնքի տակ: Սևանա լճի մակարդակի իջնելու հետևանքով՝ Դամբարանադաշտի հարավային ծայրին, երևում է Լճաշենի կիկլոպյան ամրոցն ու հնագույն քաղաքատեղիի մնացորդները, որը գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն և տարածվում է 15 բլուրների վրա: Լճաշենի տարածքում առկա են Սուրբ Աստվածածին եկեղեցի 17-րդ դար, գերեզմանոց խաչքարերով 10-18 րդ դար, Դամբարանադաշտ Ք.ա. 2-1 հզմ, Մատուռ 10-14 րդ դար: Լճաշեն բնակավայրի տարածքը համարվում է թանգարան՝ բաց երկնքի տակ: Սևանա լճի մակարդակի իջնելու հետևանքով՝ Դամբարանադաշտի հարավային ծայրին, երևում է Լճաշենի կիկլոպյան ամրոցն ու հնագույն քաղաքատեղիի մնացորդները, որը գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն և տարածվում 15 բլուրների վրա: Գյուղում և նրա շրջակայքում կան ինչպես Արամեան շրջանի, Արարատյան թագավորության, այնպես էլ Արտաշեսյան, քրիստոնեական ժամանակաշրջանների հուշարձաններ, պաշտամունքային կոթողներ: Լճաշեն հնագիտական հուշարձանը համաշխարհային ճանաչում ստացավ գյուղից 3 կմ հարավ-արևելք, լճի ափամերձ հատվածում գտնվող բրոնզեդարյան դամբարանադաշտի շնորհիվ: Այն զբաղեցնում է 8 հեկտար տարածք և ընդգրկում է շուրջ 800 դամբարան:

Կատարված պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են նախապատմական շրջանի բնակատեղիներ, բերդ-ամրոցներ, 3-2-րդ հազարամյակների դամբարանադաշտեր ու առանձին կոթողներ:

Լճաշեն հնագիտական հուշարձանը համաշխարհային ճանաչում ստացավ գյուղից 3 կմ հարավ-արևելք, լճի ափամերձ հատվածում գտնվող բրոնզեդարյան դամբարանադաշտի շնորհիվ: Այն զբաղեցնում է 8 հեկտար տարածք և ընդգրկում է շուրջ 800 դամբարան:

## 7.Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզում տեղակայված Սևան ազգային պարկի ռեկրեացիոն գոտում: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 13700մ$^2$ կամ 1,3հա: Տարածքում արդեն կատարվել են մաքրման աշխատանքներ՝ ծառաթփային բուսականությունից: Տարածքում պահպանվել են գոյություն ունեցող ծառերը:

**Քանդման աշխատանքներ**. տարածքում առկա են շարժական շինություններ: Մինչև շինարարական աշխատանքների սկսելը տարածքում արդեն իսկ իրականացվել են մաքրման աշխատանքներ: Քանդվելու և տարածքից հեռացվելու են ապօրինի տեղադրված ժամանակավոր շինությունը՝ «Սևան» ԱՊ-ի համաձայնությամբ: Քանդման

աշխատանքների ընդհանուր ծավալը կազմելու է 225 տոննա: Շինաղբը հեռացվելու է տարածքից համայնքի համաձայնությամբ՝ ամենօրյա ռեժիմով:

Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

## 7.1 Տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները.

«Սևան» ազգային պարկը որպես թիվ 5 հանրային լողափի կառուցապատող քաղաքացի Իլոնա Հարությունյանին վարձակալության իրավունքով տրամադրել է 13700մ2 տարածքը՝ 7 տարի ժամկետով: Նախատեսվող հանրային լողափի կառուցման տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայր ափամերձ հատվածում: Տարածքի մուտքը՝ Սևան-Երևան Մ-14 ավտոմայրուղուց գոյություն ունեցող երկրորդական ճանապարհով:

Շինհրապարակ: Շինհրապարակը լինելու է ամբողջ տարածքը: Շինարարության փուլում աշխատողների առավելագույն թիվը կկազմի 125 մարդ:

Շինհրապարակի նախագիծ



Տարածքը ժամանակավոր ցանկապատվելու է: Շինարարության փուլում տարածքը կապահովվի ժամանակավոր ջրամատակարարմամբ, էլեկտրաէներգիայի մատակարարմամբ աշխատողների համար կտեղադրվեն ժամանակավոր տնակ, բիոզուգարան, անիվների լվացման հարթակ, շինանյութերի և շինաղբի տեղադրման համար նախատեսված տարածք՝ տակդիրներով: Շինհրապարակն ապահովված է լինելու, հակահրդեհային վահանակներով, հիդրատներով, կրակմարիչներով, աղբամաններով:

Նկար 8.


Բացատրություն
1.Սպա համալիր լողավազանով
2. Բաց լողավազանով
3. Ռեստորան
4. Գլեմփինգ
5. BBQ տնակ
6. Ծխելու տաղավար
7. 3 հատ աղբի կոնտեյների համար նախատեսված փակ շինություն
8. Փայտե տախտակամած
9. Համերգային դահլիճ
10. Ճամփեզրային սրճարան
11. Ժամանակավոր բազմաֆունկցիոնալ շինություն
12. Զուգարան - 4 խցիկով
13. Փարքինգ
14. Մանկական խաղահրապարակ հովանոցով
15. Սեղանի թենիսի տարածք հովանոցով
16. Կոյուղաջրերի կենսաբանական մաքրման կայան 1 հատ
17. Էկո արահետ
18. Շոգեբաղնիքներ - 6 հատ
Ծածկույթներ
Հողամասի ընդհանուր մակերես - 13418 մ2 (100 %)
Ջուր - 382 մ2 ( 2,8 %)
Փայտերի վրա կառուցված տախտակամած - 3071,8 մ2 (22,8 %)
Լողափ - 1069 մ2 ( 8 %)
Ավազի հիմքի վրա մանկական խաղահրապարակ - 282 մ2 (2%)
Պլաստիկ վանդակաճաղ սիզամարգի համար - 490 մ2 (4 %)
Սիզամարգով և էկո սալիկներով ծածկույթ - 1617,7 մ2 (12 %)
Ավազի և մանրախճի խառնուրդ (Փարքինգ)- 704 մ2 (5,2 %)
Սիզամարգ տնկարկների տակ – 5827,1 մ2 (43 %)
Սարքավորում
Մանկական սարքավորում
Վաճառքի տաղավարներ - 4 հատ
Նստարաններ - 23 հատ
Աղբամաններ - 18 հատ
Խմելու ցայտաղբյուրներ - 2 հատ
Ցնցուղ ընդունելու խցիկներ - 3 հատ
Հանդերձարաններ - 5 հատ
Նստելու համար նախատեսված դիզայներական քարեր - 10 հատ
Արևային լոգանք ընդունելու համար նախատեսված նստարաններ - 38 հատ
Տեղեկատվական վահանակներ/ցուցանակներ - 32 հատ
Արևային էներգիայից սնվող լապտեր - 81 հատ
Էկո արահետ - 336մ
Ծառեր և թփեր
Գոյություն ունեցող ծառեր - սոճի - 85 հատ
Նախատեսված ծառեր - Պտղատու ծառեր (խնձորենի, տանձենի, հոն, Сакура) - 20 հատ
Նախատեսված ծառեր - սաղարթախիտ ծառեր (սոսի, թխկի, արոսենի) - 20 հատ
Փշատերև ծառեր - 20 հատ + 64 հատ
Փշատերև թփեր (լեռնային սոճի, կազակ գիհի/հորիզոնական, արևմտյան նոճի գլոբոզա, արևմտյան նոճի դանիկ) - 523 հատ
Սաղարթախիտ թփեր (շիմշատ, հորիզոնական կոտոնեասթեր, թունբերգա ծորենի, սովորական յասաման, ֆորզիցիա, սպիրեա վանգուտ, ) - 100 հատ
Ռոկարի ( ալպիական սլայդ)
Ծաղկանոց (վարդ, յուկա, էխինացեա, կորեոպսիս, շաֆել) - 110մ2
8 ⊕ 1903.39
1.Ռելիեֆի նիշերը տես Ծանոթություն իրադրության հատակագծում
2. Ամբողջ տարածքով նախատեսվում է կանաչապատման, ծառատունկի, ինչպես նաև բարեկարգման աշխատանքներ
3. Նախատեսվում է ամբողջ տարածքով տեղադրել աղբամաններ
4. Նախատեսվում է ավտոմայրուղուց դեպի տարածք մուտքի և ելքի հատվածներում ճանապարհը կահավորել ճանապարհային նշաններով:
6. Նախատեսվում է իրականացնել կոյուղագծի կառուցում մոտ 670մ երկարությամբ տնակներից, ռեստորանից և տնտեսական շինությունից դեպի մաքրման կայան, նախատեսվում է մոտ 402մ3 հողային աշխատանք:
Շինարարական աշխատանքերն իրականացվելու են 4 փուլով:
1. Մոլախոտերի և ապօրինի կառույցների քանդում, ստորգետնյա հաղորդակցությունների կազմակերպման հողային աշխատանքներ, հետիոտնային արահետների, շարժական և ոչ հիմնական շինությունների (սանհանգույց, BBQ տնակներ, ճամփեզրային սրճարան) կառուցում, փարքինգ, մանկական խաղահրապարակի կազմակերպում, ծառատունկ, լողափի և առափնյա գծի մաքրման, բարեկագման աշխատանքներ:
2. Գլեմփինգի կազմակերպում, լրացուցիչ տաղավարների և հովանոցների կառուցում, տախտակամածեր, լողափնյա սրճարան, բարեկարգում, ծառերի ու թփերի տնկում:
3. Ռեստորանի, համերգասրահի կառուցում:
4. SPA– համալիրի և բաց լողավազանի կառուցում:
Սևանա լճի տարածքի բարեկարգման նախագիծ
Փոփ. Թերթ Մշակել է Ստորագ. Ամսաթիվ
Մշակված Ի: Հարությունյան
Բարեկարգման գլխավոր պլան
Թերթ 5
Թերթեր 8
Մասշտաբ 1:1000
Լողափ թիվ 5
ԱՁ Իլոնա Հարությունյան

### 7.2 Տարածքի կառուցապատում:

Քանի որ ճարտարապետահատակագծային առաջադրանքի 8-րդ կետում չկան կառուցապատման վերաբերյալ սահմանափակումներ, ուստի կառուցապատման չափորոշիչները ընդունվել են ՀՀ կառավարության 177-Ն որոշման պահանջները, ինչպես նաև N2022/01 պայմանգրի 2.4. կետի պահանջներով:

Նախատեսվում է մեկ հարկանի շարժական և ոչ հիմնական շինությունների կառուցում: Շենքերի առավելագույն բարձրությունը 4մ: Շինությունների խտությունը 23% է, կանաչապատման և բարեկարգման խտությունը 77%:

Գործունեության ընդհանուր բնութագիրը.

- Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 3151մ2 (23%)
- Կանաչապատման ընդհանուր մակերեսը 10549մ2 (77%):

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են 4 փուլով.

1. Ստորգետնյա հաղորդակցությունների կազմակերպման հողային աշխատանքներ, հետիոտային արահետների, շարժական և ոչ հիմնական շինությունների (սանհանգույց, տաղավարներ, ճամփեզրային սրճարան) կառուցում, փարքինգ, մանկական խաղահրապարակի կազմակերպում, ծառատունկ, լողափի և առափնյա գծի մաքրման, բարեկագման աշխատանքներ:
2. Քոթեջների կազմակերպում, լրացուցիչ տաղավարների և հովանոցների կառուցում, տախտակամածեր, լողափնյա սրճարան, բարեկարգում, ծառերի ու թփերի տնկում:
3. Ջրում շոգեբաղնիքի կառուցում՝ փայտե տախտակամածերով, ռեստորանի, համերգասրահի կառուցում:
4. SPA-համալիրի և բաց լողավազանի կառուցում:

Բոլոր շինություններում տեղադրված են լինելու կրակմարիչներ՝ հակահրդեհային նկատառումներով: Փոքր շինություններում՝ մեկ հատ ամեն շինության համար, մեծ շինություններում՝ 3 հատ ամեն շինության համար. սպա կենտրոն, ռեստորան, համերգային սրահ:

Կառուցվող բոլոր շինությունները և բարեկարգման ենթակա տարածքները ոչ հիմնական են և չեն ունենալու ցեմենտային հիմք: Որոշ կառույցները գերանանման հիմքերի վրա են լինելու: Դա թույլ կտա չխաթարել գոյություն ունեցող էկո համակարգը և անհրաժեշտության դեպքում տեղափոխել կառույցները:

Քոթեջ-տնակներ՝ նախատեսված գիշերակացի համար, ընդհանուր 10 հատ, 4 հատ 28մ2, 1ննջասենյակ, 1 զուգ, բաղնիք, վերանդա-խոհանոց, 4 հատ 54մ2, 2 ննջասենյակ, 1 զուգբաղնիք, 2 հատ 101,6 մ2, 3ննջասենյակ, 1բաղնիք զուգարան:

Տարածքում տեղադրվելու են 531,2$մ^2$ ընդհանուր մակերեսով տաս շարժական տնակներ (մեկ, երկու, երեք սենյականոց), որոնք իրականացվելու են թեթև կոնստրուկցիաներով, 1901.50-1903,50 բ.ն. վրա: Էկո մայթերի և անցուղիների մակերեսը կազմելու է 394$մ^2$ 1900.75-1903.50 բ.ն. վրա: Նախատեսվում է 110$մ^2$ սիզամարգի իրականացում, լողափի ավազակոպճային շերտը կազմելու է 1106$մ^2$:

Քոթեջները տեղադրվելու են 1905 նիշից ցածր տարածքներում:

Հանգստյան գոտու տարածքում լինելու են՝ Սպա համալիր լողավազանով (553,2$մ^2$ 1900.0-1902 բ.ն.), բառ լողավազանով (226$մ^2$ 1900.0 - 1901.75 բ.ն.), ռեստորան (313$մ^2$ 1900.0 – 1901,75 բ.ն.), քոթեջներ (532$մ^2$, 1900-1903,5 բ.ն. վրա), տաղավարներ(126$մ^2$, 1901.60 - 1902.51բ.ն., թվով 10 հատ), համերգային դահլիճ (394$մ^2$, 1902.50 - 1903.50բ.ն.), Ճամփեզրային սրճարան (82,7մ2, 1903.50 բ.ն.), ժամանակավոր շինություն (50$մ^2$, 1902.50-

1903.50բ.Ն.), զուգարաններ (4 հատ), ավտոկայանատեղի (704մ$^2$, 14 մեքենայի համար, 1903.00 - 1903.50 բ.Ն. վրա), մանկական խաղահրապարակ հովանոցով (282մ$^2$, 1900.75 - 1902.00բ.Ն.), ծխելու տաղավար (8մ$^2$, 1903.00-1903.5բ.Ն.), աղբի կոնտեյներների համար նախատեսված փակ շինություն (1մ$^2$, 1903.00 - 1903.50բ.Ն.), սեղանի թենիսի/փինգ-փոնգի տարածք հովանոցով (109մ$^2$, 1902.50-1903.50բ.Ն.), շոգեբաղնիքներ (6հատ 1900բ.Ն.), Էկո արահետ (394մ$^2$ 1900.75-1903.50 բ.Ն.): Տարածքում տեղադրվելու են նաև փայտյա սյուներ, որոնց եզրամասին տեղադրվելու են փոքրիկ արևային վահանակներ:

Նկար 9.



Համաձայն նախագծային լուծումների՝ նշված տարածքի կառուցապատումը իրականացվելու է չորս փուլերով:

Կառուցապատման առաջին փուլում (առաջին երկու տարում) նախատեսվում է մոլախոտերի և ապօրինի կառույցների քանդում, ստորգետնյա հաղորդակցությունների կազմակերպման հողային աշխատանքներ, հետիոտային արահետների, շարժական և ոչ հիմնական շինությունների (սանհանգույց, տաղավարներ, ճամփեզրային սրճարան)

կառուցում, ավտոկայանատեղի, մանկական խաղահրապարակի կազմակերպում, ծառատունկ, լողափի և առափնյա գծի մաքրման, բարեկագման աշխատանքներ:

Այսպիսով, կառույցները լինելու են շարժական և ոչ հիմնական շինություններով, երեսպատվելու են փայտով, տեղադրվելու են փայտյա ցցերի վրա, որոնք անհրաժեշտության դեպքում հնարավոր է արագ ապամոնտաժել և հեռացնել տարածքից: Ավտոկայանատեղին նախատեսվում է իրականացնել ավազային և մանրախճային ծածկույթի շերտերով, միջանկյալ հատվածում օգտագործելով գեոտեքստիլ: Մանկական խաղահրապարակը նախատեսվում է իրականացնել ավազային շերտով, որը կլցվի սեղմված հիմքի վրա: Տարածքում հիմնական որևէ շինություն չի նախատեսվում, իսկ ոչ հիմնական կառույցներն իրականացվելու են հավաքովի, բարձրորակ պատրաստի նյութերից, հիմնականը ներմուծվելու է արտասահմանից:

Նկար 10.



Գլեմպինգ



Ճամփեզրային սրճարան

Ռեստորան



Առաջին փուլում տարածքում նախատեսվում է 14 ավտոմեքենայի համար (704մ$^2$) ավտոկայանատեղի՝ ավազա-մանրախճային հիմքով: Ավտոկայանատեղին տեղադրված է գլխավոր մուտքի ձախակողմյան հատվածում: Կայանատեղին ունի նաև հետիոտն ճանապարհներ՝ դեպի քոթեջային գոտի: Լցոնված ավազի շնորհիվ ջրահեռացումը կատարվելու է բնական եղանակով: Նախատեսվում է նաև սանհանգույց, տաղավարներ, ճամփեզրային սրճարան) կառուցում, մանկական խաղահրապարակի կազմակերպում, ծառատունկ, լողափի և առափնյա գծի մաքրման, բարեկագման աշխատանքներ

**Երկրորդ փուլում** նախատեսվում է քոթեջների կառուցում, լրացուցիչ տաղավարների և հովանոցների կառուցում, տախտակամածեր, լողափնյա սրճարան, բարեկարգում, ծառերի ու թփերի տնկում:

**Երրորդ փուլում** նախատեսվում է ջրում շոգեբաղնիքի կառուցում՝ փայտե տախտակամածերով, ռեստորանի, համերգասրահի կառուցում:

**Չորրորդ փուլում** նախատեսվում է SPA-համալիրի և բաց լողավազանի կառուցում:

Կառուցվող բոլոր շինությունները լինելու են ոչ հիմնական և չեն ունելալու բետոնյա հիմքեր: Որոշ կառույցները՝ բառ լողավազանով, շոգեբաղնիքներ, ռեստորանային համալիրի տախտակամածները դրվելու են գերանանման հիմքերի վրա՝ ցցային հիմքերով: Այս լուծումները թույլ կտան չխաթարել գոյություն ունեցող էկո համակարգը և անհրաժեշտության դեպքում տեղափոխել կառույցները:

Ներտարածքային հետիոտն ճանապարհները իրականացվելու է սալիկներով:

Տարածքի սպասարկման գոտին կազմում է 50մ$^2$, որը ծառայելու է ընդհանուր տարածքի սպասարկմանը, աշխատողների համար ստեղծվելու են բավարար կոմունալ կենցաղային բոլոր հարմարությունները՝ գիշերակացով:

Տարածքում նախատեսվում է բիոզուգարան մեկ հատ, 4-ական խցիկներով՝ ափից 63մ հեռավորության վրա:

Տարածքում նախատեսվում է 14 ավտոմեքենայի համար ավտոկայանատեղի՝ ավազակոպճային ծածկույթի վրա: Ավտոկայանատեղին տեղադրված է ավտոմոբիլային ճանապարհի հարակից հատվածում:

Շահագործման փուլում հանգստացողների առավելագույն քանակը կազմելու է 100 մարդ: Սպասարկող անձնակազմը լինելու է 66 մարդ՝ 2 պահակ, 3 տեխնիկական աշխատող: Սպասարկող անձնակազմը տեղակայվելու է ժամանակավոր շինությունում:

Աշխատողների համար ստեղծվելու են բավարար կոմունալ կենցաղային բոլոր հարմարությունները՝ գիշերակացով:

Կառուցապատման հեռավորությունը Սևանա լճից ուղղահայաց՝ 8մ է: Գոյություն ունեցող հետիոտն ճանապարհները ոչ հիմնական կառուցապատում են՝ 336 $մ^2$:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում առկա են ապօրինի տեղադրված ժամանակավոր տնակներ: Բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարաման համակարգերը: Տարածքը ցանկապատված չէ:

Տարածքների ճարտարագիտական հատակագծումն իր մեջ ներառում է քաղաքաշինության համար անհրաժեշտ տարածքների պիտանելի դարձնելու միջոցառումներ: Քաղաքաշինության բարեկարգման տարրերն են ճանապարհափողոցային ցանցի բարեկարգումը: Տեղանքի բնույթը հարթավայրային-բարձրանիշերի փոքր տարբերությամբ, լեռների ու ձորերի բացակայությամբ: Ճանապարհի գլխավոր մուտքը կազմակերպվել է Մ10 Ծովագյուղ-Վարդենիս ճանապարհից: Ճանապարհի լայնքը 3.7 մ , երկկողմանի թեքություններով դեպի կողային դրենաժներ: Գոյություն ունեցող ասֆալտապատ ճանապարհը տեղակայված է 1905.00 նիշի վրա:

Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական և առկա քաղաքաշինական փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման՝ Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան: 1905.0 մ բացարձակ նիշից ցածր տարածքում հիմնական շինություններ չի նախատեսվում: Հանրային լողափն ապահոված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Տարածքում և շինություններում տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր:

Տարածքի մուտքը լինելու է սիզամարգով և բիոսալիկներով /271 մ2/ կազմակերպված ճանապարհով:

**7.3 Հողային աշխատանքներ.**

Հանգստի գոտու կառուցապատման ժամանակ նախատեսվում է իրականացնել մոտ 670մ երկարությամբ կոյուղագծի կառուցում՝ տնակներից, ռեստորանից և տնտեսական շինությունից դեպի մաքրման կայան, որի արդյունքում կկատարվի մոտ 402մ$^3$ ծավալի հողային աշխատանք: Հանվող հողային զանգվածը (գրունտ) կազմելու է 402մ$^3$, որն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի հարթեցման և հետլիցքի նպատակով: Տարածքում բացակայում է բնահողը:

Կառուցապատումը կատարվելու է 4 փուլերով՝ տևելու է մինչև 2 տարի: Առաջին փուլը տևելու է 6 ամիս:

## Ժամանակացույց

| | Ամիս | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 04.23 | 05.23 | 06.23 | 07.23 | 08.23 | 09.23 | 10.23 | 11.23 | 12.23 | 01.24 | 02.24 | 03.24 | 04.24 | 05.24 | 06.24 | 07.24 | 08.24 | 09.24 | 10.24 | 11.24 | 12.24 | 01.25 | 02.25 | 03.25 |
| Ստորգետնյա հաղորդակցությունների կազմակերպման հողային աշխատանքներ, հետիոտային արահետների, շարժական և ոչ հիմնական շինությունների (սանհանգույց, տաղավարներ, ճամփեզրային սրճարան) կառուցում, փարքինգ, մանկական խաղահրապարակի կազմակերպում, ծառատունկ, լողափի և առափնյա գծի մաքրման, բարեկագման աշխատանքներ: | x | x | x | x | x | x | | | | | | | | | | | | | | | | | | |
| Քոթեջների կառուցում, լրացուցիչ տաղավարների և հովանոցների կառուցում, տախտակամածեր, լողափնյա սրճարան, բարեկարգում, ծառերի ու թփերի տնկում: | | | | | | | x | x | x | x | x | x | | | | | | | | | | | | |
| Ջրում շոգեբաղնիքի կառուցում՝ փայտե տախտակամածերով, ռեստորանի, համերգասրահի կառուցում: | | | | | | | | | | | | | x | x | x | x | x | x | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| SPA-համալիրի և բաց լողավազանի կառուցում: | | | | | | | | | | | | | | | | | | | x | x | x | x | x | x |

Գործունեության իրականացման հաջորդական փուլերում շինարարությունը կատարվելու է նույն ժամանակացույցով:

**7.4 Էլեկտրամատակարարում**.

Տարածքի էներգամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ»ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի: Տեխնիկական պայման ստանալու նպատակով դիմել ենք «ՀԷՑ»ՓԲԸ-ին:

**7.5 Ջերմամատակարարում.**

Գործունեության իրականացման սկզբնական փուլում տարածքում գազամատակարարման համակարգի կառուցում չի նախատեսվում: Ջեռուցումը կատարվելու է յուրաքանչյուր քոթեջում և շինությունում տեղադրվող անհատական էլեկտրասարքերով:

**7.6 Ջրամատակարարում. Ջրահեռացում.**

Գործունեության ենթակա տարածքում բացակայում է ջրամատակարարաման և ջրահեռացման համակարգերը:

**Ջրամատակարարում.**

Շինարարության փուլերում աշխատողների խմելու ջրամատակարարումը կատարվելու է բերովի ջրով՝ շշերով, մինչև ջրամատակարարման համակարգի կառուցումը: Իսկ բանվորների կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

**Շահագործման փուլում** տարածքից՝ ջրամառտակարարումը կատարվելու է «Վեոլիա ջուր» ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, որի համար դիմել ենք «Վեոլիա ջուր» ՍՊԸ-ին:

Կառուցվելու է ջրաչափական հանգույցի համար դիտահոր: Ջրամատակարարումն կատարվելու է շուրջօրյա:

Քոթեջներում ներքին ջրամատակարարումը կատարվելու է de 25-de 20, իսկ շինությունների ներանցման հատվածները՝ de 32-de 20 պոլիպրոպիլենային խողովակներով: Տաք ջրամատակարարման համար նախատեսվել են de 25-de 20 պոլիպրոպիլենային խողովակներով՝ տեղադրված 5մմ հաստությամբ արհեստական կաուչուկից ջերմամեկուսիչ խողովակների մեջ:

**Ջրահեռացում**. Շահագործման փուլում նախատեսվում է տարածքում տեղադրել 1 բլոկային համակարգով, ընդհանուր 2290 կգ քաշով, 13,5մ երկարությամբ, 2,2մ լայնությամբ և 2,7մ բարձրությամբ Եվրոլոս-200 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 40,0մ$^3$ ծավալով( Q=40.0մ$^3$/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:

Այն անցել է Ռուսաստանի հանրապետության Առողջապահության նախարարության փորձաքննությունը և սերտիֆիկացված է ՌՖ Պետստանդարտի կողմից:

Կեղտաջրերը բակային ներքին ցանցով հավաքվում են տարածքի ամենացածր կետում և պոմպակայանով տրվում մաքրման կայան: Մաքրման կայանը տեղադրվելու է 1903,5 նիշում՝ վերգետնյա: Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե

խողովակներից Փ50;40;32;25;20մմ: Արտաքին ցանցը մոնտաժվում է Փ50մմ պոլիէթիլենային խողովակներից:

Մաքրման կայանի Նկար 11.






Մաքրման կայանի տեղադրման համար հիմք են ընդունվելու ՀՀ կառավարության 2001թ. սեպտեմբերի 24-ի N896 (ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 5-րդ կետի) և 2015թ. մարտի 19-ի N596-Ն որոշումների պահանջները՝ Ոչ հիմնական շինությունների տեղադրման դեպքում, կապված տեղանքի առանձնահատկության հետ, կարող են կատարվել տեղանքին կապելու, հողին ժամանակավորապես ամրացնելու աշխատանքներ (տեղադրման հորիզոնական հարթակի ստեղծում, շինության խարսխակապում և այլն):

Մաքրման կայանը տեղադրվելու է հողի մակերևույթին, ամրացվելու է խարսխակապման միջոցով՝ մետաղական ցանցով՝ մետաղական ցցերով ամրացվելու է հողին: Անհրաժեշտության դեպքում (սողանք, սելավ, հեղեղում և այլն) կապամոնտաժվի և կբարեկարգվի տարածքը:

Նախատեսվող գործունեության նախագիծը կազմվել է ՀՀ-ում գործող նախագծային և շինարարական նորմերին համապատասխան: Նախագծային լուծումներում ապահոված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:

### 7.7 Աղբահանություն

Տեղադրվելու են 3 հատ, յուրաքանչյուրը 1.1 չափերի և 18 հատ փոքր, կետային աղբամաններ:

Տարածքի աղբահեռացումը կատարվելու է համաձայն՝ Սևանի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի՝ պայմանագային հիմունքներով (Հավելված 6.):

### 7.8 Լողափի կահավորում:

Տարածքի կահավորումը նախատեսվում է կատարել, ելնելով ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման, N2 հավելվածում նշված պահանջներից: Նախատեսվում է տարածքում տեղադրել.

• հանդերձարան-խցիկներ (հանգստացողների 20 տոկոսի հաշվարկով` 100 մարդու համար` 5 խցիկ, 1 մարդու համար` 1,2-1,3 քառ. մետր մակերեսով),

• տենտեր, հովանոցներ (հանգստացողների 30 տոկոսի հաշվարկով` 1 մարդու համար` 3,5 քառ. մետր),

• լողափի գոտու մանկական հատվածը կարող է կահավորվել տոպոգանով (H = 2,5-3,0 մետր` մեկ ելքով դեպի լիճ), շվաքարաններով, ավազամաններով, մանկական ջրավազաններով, ճոճանակներով, ընդ որում, մանկական հատվածի լողալու գոտու հատակն ունի փոքր թեքություն` ոչ ավելի, քան 70 սանտիմետր խորությամբ,

• աղբանոթներ` 50 մարդու համար` 1 աղբանոթ հաշվարկով,

• ցնցուղարանները (75 մարդու համար` 2-4 ցնցուղ, բայց առնվազն 2 ցնցուղ հաշվարկով), խմելու ջրի ծորակները (200-300 մարդու համար` 1 ծորակ, բայց առնվազն 1 ծորակ հաշվարկով),

• զուգարանները, կտեղադրվեն գոտուց առնվազն 50 մետր հեռավորության վրա (50 մարդու համար՝ 1 զուգարանակոնք և 1 միզաման, բայց առնվազն 2 զուգարանակոնք և 1 միզաման),

• աղբի կոնտեյներները, որոնք պետք է ունենան փակվող կափարիչներ, կտեղադրվեն հարթակների վրա և կունենան հարմար մերձատար ուղիներ:

Շահագործման փուլում հանգստյան գոտում պահպանվելու են վերը նշված որոշման պահանջները: Հանգստյան գոտու առավելագույն բեռնվածությունը նախատեսվում է 100 մարդու համար: Լողափում լինելու է՝ 38 հատ արևային լոգանք ընդունելու համար նախատեսված նստարաններ /արևայրուքի բազմոց, հովանոց/, տենտեր (մեծ)՝ 2 հատ, 5 հանդերձարան- խցիկ, 4 զուգարան, 18 հատ աղբաման, 2 հատ խմելու ցայտաղբյուրներ, 4 հատ վաճառքի տաղավարներ, 23 հատ նստարան, 10հատ նստելու համար դիզայներական քարեր: Լինելու են նաև՝

- փայտերի վրա կառուցված տախտակամած՝ 3046,2 մ2 (23 %),
- Ավազի հիմքի վրա մանկական խաղահրապարակ - 282 մ2 (2%):

Կառուցապատման ժամանակ կիրառվելու են N 5 հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման 2022/01 պայմանագրի 2.4.16 կետի դրույթների պահանջները, մասնավորապես, ցնցուղարաններ, շվաքարաններ, սանհանգույցներ, հանդերձարաններ, խաղահրապարակ, ավտոկայանատեղի և այլ պահանջներ:

**7.9 Կանաչապատում, բարեկարգում.**

Նախատեսվում է 10 549մ$^2$ մակերեսով կանաչապատում, որն իրականացվելու է տեղանքին բնորոշ բուսատեսակներով՝ պտղատու ծառեր/խնձորենի, տանձենի, հոն, սակուրա(չինական բալենի)/՝ 20 հատ, սաղարթախիտ ծառեր/սոսի, թխկի արոսենի/-20 հատ, փշատերև ծառեր՝ 84 հատ, փշատերև թփեր /լեռնային սոճի, կազակ գիհի/հորիզոնական, արևմտյան նոճի գլոբոզա, արևմտյան նոճի դանիկ/-41 հատ, սաղարթախիտ թփեր (շիմշատ, հորիզոնական կոտոնեասթեր, ծիթապտղենի, թունբերգա ծորենի, սովորական յասաման, ֆորզիցիա, սպիրեա վանգուտ) - 100 հատ, Ռոկարի ալպիական սլայդ, ծաղկանոց (վարդ, յուկա, էխինացեա, կորեոպսիս, շալֆեյ) - 110մ$^2$:

Նախատեսվում է տարածքի բարեկարգում՝ ներտարածքային ճանապարհների տեսքով: Դեպի հանգստյան գոտու տարածք մոտեցող ճանապարհը լինելու է գրունտային, իսկ հանգստյան գոտու տարածքում հետիոտնի ճեմուղիները լինելու են հիմնականում կանաչապատ՝ մասնակի սալիկապատումով (բուլիժնիկ), սիզախոտերով:

Նկար 12. Կանաչապատման նախագիծ




## 7.10 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու և կենցաղային նպատակով:

**Շինարարության փուլում** աշխատողների խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում, շշերով՝ ըստ պահանջի:

Ջրցանի, աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվող ջուրը բերվելու է ավտոցիստեռնով, որը լցվելու է տարածքում գոյություն ունեցող 25 $մ^3$ տարողություն ունեցող բաքում: Տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով:

**Շահագործման փուլերում** հանգստացողների համար խմելու ջուրը կմատակարարվի ջրամատակարարաման համակարգից՝ շուրջօրյա:

Ջուրը նախատեսվում է նաև արտաքին հրդեհամարման համար:

Արտաքին հրդեհամարման համար յուրաքանչյուր կառույցի վրա նախատեսվում հակահրդեհային հիդրանտ, որոնք տեղադրվելու ենք շինությունլնն երի արտաքին պատերին:

Շինարարության փուլում տեղադրվելու է 2մ3 տարողությամբ պարզարան հրդեհաշիջման համար:

Շինարարության և շահագործման փուլերում աշխատողների և հանգստացողների կենցաղային և տնտեսական ջրածախսը կազմում է:

**Շինարարության փուլում** ամենածանրաբեռնված հերթափոխում աշխատողների առավելագույն թվաքանակը կազմելու է 25մարդ՝ 5 ինժեներատեխնիկական աշխատող և 20 բանվոր:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W= (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ` n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

N - ջրածախսի նորման տեխնիկական աշխատողների համար` - 0.016մ$^3$,

$n_1$ - բանվորների թիվն է,

$N_1$ - ջրածախսի նորման բանվորների համար` - 0.025մ$^3$/մարդ օր

T-աշխատանքային օրերի առավելագույն թիվն ամբողջ շինարարության ժամանակ` 24 ամիս՝ 528 օր:

Այսպիսով.

W= (5 x 0.016 + 20 x 0.025) x 528 = 306,24մ$^3$/շին.ժամ, միջին օրական 0,58մ$^3$:

**Շահագործման փուլում** աշխատողների և հանգստացողների ընդհանուր թվաքանակը կազմում է 166 մարդ՝ 66 սպասարկող և 100 հանգստացողներ: Շահագործման փուոլում խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է, ելնելով առանձին լոգարաններով հյուրատներում 1 հանգստացողի/աշխատողի ջրօգտագործման առավելագույն ծախսից.

$$V_y= n \times 200լ$$

Որտեղ` n- հանգստացողների/աշխատողների թիվն է՝ 166

Այսպիսով.

$$V_y = 166 \times 200 = 33\ 200\text{լ/օր}$$

Մեկ օրվա կտրվածքով ընդհանուր ջրօգտագործումն առավելագույն թվով հանգստացողների և աշխատողների համար կկազմի 33,2մ$^3$/օր:

Շահագործման փուլում կեղտաջրերի արտահոսքը կկազմի.

$$W_{\text{կենց.կոյ}} = W_{\text{կ}}.X\ (1\text{-Կ})$$

Որտեղ,

շահագործման փուլում ջրածախսը

Կ - կորուստները, ընդհանրացված 5 տոկոս (0.05),

Հետևաբար,

$W_{\text{կենց.կոյ}}$= 33,2 X (1-0,05)= 31,54մ$^3$/օր կոյուղային արտահոսք շահագործման փուլում:

**Կեղտաջրեր.** Կենցաղային հոսքերը կոյուղու բակային ցանցով ինքնահոս եղանակով, պոլիէթիլենային, պոլիպրոպիլենե և երկաթյա խողովակներով հեռացվելու է դեպի մաքրման կայան:

Նախատեսվում է տեղադրել 1 բլոկային համակարգով, ընդհանուր Եվրոլոս-200 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 40,0մ$^3$ ծավալով( Q=40.0մ$^3$/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:

Կայանը բաղկացած է հետևյալ բլոկներից.

- ընդունիչ խուց,
- աերացիայի բլոկ,
- պարզեցման բլոկ,
- տիղմի խտացման բլոկ:

Մաքրված կեղտաջրերը բացարձակապես անվտանգ են շրջակա միջավայրի համար և չունեն տհաճ հոտ:

Կեղտաջրերի մաքրումից հետո կենսաբանական մաքրման կայանի ելքում ցուցանիշները կլինեն նորմերին համապատասխան՝ ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, ԹՔՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ: Կոյուղու ներտարածքային ցանցը իրականցվելու է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով և դիտահորերով: Ճիշտ շահագործման դեպքում այն կարող է աշխատել երկար ժամանակ ՝ մոտ 50 տարի:

Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը կառուցվածքով շատ նման է գետի տիղմին և արժեքավոր պարարտանյութ է: Կուտակված չեզոք տիղմը, որը բաղկացած է անօրգանական միացություններից (մասնավորապես նիտրատներից և ածխաթթու գազից) պարբերաբար հեռացվում է (տարին 2 անգամ) համապատասխան մասնագիտական ծառայությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

Կայանի տեղադրման համար հիմք է ընդունվել կեղտաջրերի հաշվարկային ելքերը՝ (31,54մ3/օր) հանգստյան գոտում առավելագույն հանգստացողների և աշխատողների քանակի հաշվարկով:

Ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները կատարվելու են ՀՀՇՆ 40-01.01-2014՝ «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում», ՇՆուԿ 2.04.02-84՝ «Ջրամատակարարում, արտաքին ցանցեր և շինություններ», ՇՆուԿ 2.04.03-85՝ «Կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ» նորմերին համապատասխան:

Ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման աստիճան ապահովող այլ տեսակի մաքրման կայան:

Մաքրման կայանը տեղադրվելու 1905 նիշից ցածր, քանի որ տարածքը հանրավորություն չունի ապահովել 1905 նիշից բարձր տեղադրումը: Այն տեղադրվելու է ստորգետնյա փոսի մեջ, որը չի բետոնապատվելու՝ ելնելով տարածքից առանձնահատկություններից և մաքրման կայանի բնութագրից:

Մաքրման կայանից մաքրված ջրերը ջրահեռացման բակային ներքին ինքնահոս ցանցով հեռացվելու և օգտագործվելու են տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով:

Քոթեջների տանիքներից անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը հեռացվելու են դեպի կանաչ տարածքներ:

**Նյութեր.** Շինարարության փուլում օգտագործվելու են նաև այլ շինարարական նյութեր՝ երեսապատման փայտ, վիտրաժային ապակի, տանիքի համար օգտագործվող մետաղական կղմինդր, արտաքին երեսապատման ներկեր և սալիկներ, տանիքի ձևավոր թիթեղ, մետաղական հեծաններ, ներքին հարդարման նյութեր: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից կամ մասնակի լինելու են արտասահմանյան:

Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

**7.11 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ**.

Գործունեության կատարման շինարարության ժամանակաշրջանում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ: Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը.

- Բեռնատար ինքնաթափ MA3 5320 կամ համարժեք
- Էքսկովատոր GCB
- Էլ. եռակցման սարք - ըստ պահանջի
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ:

Վերջիններս լինելու են ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին: Այն դեպքում, երբ շինարարական տեխնիկան կաշխատի գործունեության տարածքում, նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

## 8. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բնութագրերը

**8.1 Օդային ավազան.**

Գործունեության իրականացման շինարարության փուլում տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ ծխագազերի և հողային աշխատանքների ընթացքում՝ փոշու տեսքով: Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է ժամանակավոր և կարճատև: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապահի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեության իրականացման ընթացքում շինարարարական աշխատանքերը կրելու են ժամանակավոր բնույթ, քոթեջները տեղադրվելու են առանց փորման աշխատաքների, ուստի ազդեցությունը օդային ավազանի վրա կլինի նվազագույն և ժամանակավոր:

**8.2 Հողային ռեսուրսներ.**
Քոթեջների տեղադրման ժամանակ հողային աշխատանքներ չեն կատարվելու: Քոթեջները սյուներով(երկաթյա ցից) խրվելու են հողային գրունտի մեջ: Հողային աշխատանքները կատարվելու են միայն մաքրման կայանի տեղադրման և ջրամատակարարաման և ջրահեռացման ստորգետնյա խողովակների անցկացման ժամանակ:

Հողային զանգվածն առաջանալու է ժամանակավոր կառույցների համար կետային(ցցային) փորվածքներից և ջրամատակարարաման և ջրահեռացման խողովակների անցկացման աշխատանքներից՝ 402մ$^3$ ծավալով, որտեղ բացակայում է բուսահողը:

Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակվելու է տարածքում՝ անմիջապես փորված խրամուղիների երկայնքով և փորվածքների(հիմքեր) մոտ և խողովակների տեղադրումից հետո օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար:

**8.3 Ջրային ռեսուրսներ.**
Շինարարական աշխատաքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով: Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում հանգստացողների համար խմելու ջուրը կմատակարարվի ջրամատակարարաման համակարգից՝ շուրջօրյա:

**Կեղտաջրերի հեռացում**. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 90*90մմ չափերի 1 բիոզուգարանից: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջոցով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը 150մ երկարության պլաստմասե խողովակներով ինքնահոս հեռացվելու են դեպի բիոզուգարան: Շինարարության փուլում արտադրական և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերի հեռացման համար շինհրապարակում՝ տեղադրվելու է վերգետնյա 2մ$^3$ ծավալով պլաստմասե տարա: Հոսքաջրերը հեռացվելու են վերգետնյա խողովակներով: Տարայում հավաքված ջուրը կօգտագործվի շինարարության ընթացքում ջրցանի նպատակով, իսկ հավաքված նստվածքը (շինաղբ կամ տիղմ) ժամանակ առ ժամանակ կհեռացվի մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում հանգստյան գոտում տարածքում տեղադրվելու են զուգարաններ՝ ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 1-ի N 2128-Ն որոշման պահանջներին համապատասխան, ելնելով հանգստացողների առավելագույն քանակից և լողափի գոտուց առնվազն 50մ հեռավորության վրա:

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման նպատակով տեղադրվելու է ռուսական արտադրության «Եվրոլոս-200» տեսակի 1 հատ մաքրման կայան:
Կայանի ելքում մաքրված կեղտաջրերն ունենալու են հետևյալ ցուցանիշները.

- ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում,
- ԹՔՊ 70-100 մգ/լ, N
- NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ:

Նշված ցուցանիշները ցածր են ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի՝ «ԿԱԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 75-Ն որոշմամբ ամրագրված՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի համար սահմանված նորմերից:

Կայանի տեղադրման համար հիմք է ընդունվել կեղտաջրերի հաշվարկային ելքերը՝ հանգստյան գոտում առավելագույն հանգստացողների և աշխատողների քանակի հաշվարկով:

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս երկաթյա խողովակներով հեռացվում են նախագծվող արտաքին ցանցի մեջ և արտաքին ցանցի միջոցով թափվում են մաքրման կայան: Մաքրման կայանից մաքրված ջրերը ջրահեռացման բակային ներքին ինքնահոս ցանցով հեռացվելու և օգտագործվելու են տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով:

Ներքին և արտաքին ցանցերն անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից՝ Ф 200;160;110;50մմ:

Շահագործման փուլում շինությունների տանիքներից անձրևաջրերը համապատասխան ջրահեռացման համակարգերով՝ ստորգետնյա պլաստմասե 182մ երկարության խողովակներով ինքնահոս հեռացվում են դեպի կոյուղու բակային ցանց:

**8.4 Կենսաբազմազանություն.**

**Բուսական աշխարհ**. գործունեության ենթակա տարածքում արդեն կատարվել են ծառաթփային բուսականության մաքրման աշխատանքները:

**Կենդանական աշխարհ**. գործունեության ենթակա տարածքը նախկինում օգտագործվել է, որը ծառայել է որպես լողափ, ուստի արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Այդ պատճառով տարածքում չկան կենդանիների բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդատեսակներ չկան:

**8.5 Թափոններ.**

Շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ծածկագիր՝ 91200601 01 00 4) ՝ 80մ$^3$ ,
- կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 41կգ/օր, շահագործման փուլում՝ 43,9կգ/օր**:**

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համպատասխան անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ, իսկ կենցաղային աղբը՝ 1 հատ աղբահավաք տարրողության մեջ:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,1մ$^3$ տարրողության և 18 հատ փոքր կետային աղբամաններ, հաշվի առնելով հանգստյան գոտում հանգստացողների և աշխատողների առավելագույն քանկությունը:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում այլ տեսակի թափոնների կուտակում չի նախատեսվում: Այդ թափոնները Կապալառու կազմակերպության կողմից ամենօր հետ են տեղափոխելու:

**Կենցաղային աղբի հաշվարկները**

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

M=n*m

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է,

հետևաբար,

M=25*120=3000կգ/տարի, օրական՝ 5,7կգ/հաշվարկն իրականացվել է աշխատողների միաժամանակյա առավելագույն ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով:

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

M=(100)*360 + 66*120=43 920կգ/տարի (43,9տոննա/տարի) կամ 120կգ/օր:

Շահագործման փուլում առաջանալու է նաև մաքրման կայանում կեղտաջրերի մաքրումից առաջացող տիղմ՝ տարեկան 0,7մ$^3$ ծավալով: Համաձայն բնապահպանության նախարարի 2006թ. 430-Ն հրամանի համաձայն դասվում է 4-րդ կարգի թափոնատեսակին՝ 94800500 04 00 4: Տիղմի մաքրումը կատարվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ տեղափոխելով աղբավայր:

**8.6 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն.**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

**8.7 Սոցիալական.**

Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 25 մարդ, որից 5 ինժեներ՝ մասնագետներ և բանվորներ՝ 20 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Աշխատողներն իրենց կենցաղ-սանիտարական պայմանները հոգալու և հանգստի կազմակերպման համար օգտվելու են տարածքում առկա և համապատասխան կահավորանքով ապահոված 50մ$^2$ մակերեսով ժամանակավոր շինությունից, որը շահագործման փուլում օգտագործվելու է լողափի կահավորանքի տեղադրման պահեստարան:

Շինարարության փուլի ավարտից հետո այն հեռացվելու է տարածքից:

**Շահագործման փուլ**. շահագործման փուլում ներգրավվելու են 15 մարդ: Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Հանգստի գոտում հանգստացողների առավելագույն ծանրաբեռնվածությունը ամբողջ փուլերի ընթացքում կարող է հասնել մինչև 100 մարդ/օր:

**8.8 Բարեկարգում**.

Հանգստյան գոտու կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, գրունտային ճանապարհի կարգաբերում: Տարածքում նախատեսվում է սալաքարերով անցուղիների կառուցում՝ հետիոտնի տեղաշարժն ապահովելու համար:

Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ծառերի տնկում՝ տարածքին բնորոշ ծառատեսակներով: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկե խողովակներով (ցնցուղային)՝ մաքրման կայանից դուրս եկող մաքրված հոսքաջրերով կամ չբավարարման դեպքում՝ կենցաղային նպատակներով մատակարարվող ջրով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ$^2$ ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0{,}4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

W = 10549*0,4*25= 105 490 լ/ջուր կամ 105,49մ$^3$/տարի ջուր (տարվա կտրվածքով):

## 9.Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական(կառավարման) միջոցառումների ծրագիրը

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Սևանա լճի ռեկրացիոն գոտում, որն արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Գործունեության ենթակա տարածքը նախկինում արդեն օգտագործվել է որպես հանգստյան գոտի՝ լողափ: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն հակասի Սևանա լճի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներով ամրագրված պահանջները՝ չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը: Շինարարության փուլի ավարտից հետո կիրականացվեն կանաչապատման աշխատանքներ:

Շահագործման փուլում գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Սակայն Սևանա լճի ռեկրացիոն գոտու ներկայիս հնարավորությունների օգտագործումը, ունենալու է տարածաշրջանի համար որոշակի դրական ազդեցություն, քանի որ կխթանի էկոտուրիզմի, զբոսաշրջության զարգացմանը՝ ներքին այցելուների և օտարերկրացի զբոսաշրջիկների ներգրավելու առումով, հետևաբար և բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում):

Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն վերջինները կլինեն կարճաժամկետ: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների, Սևանա լիճ վտանգավոր նյութերի արտահոսքերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ:

### 9.1 Օդային ավազան.

Շինարարության փուլում գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի, ինչպես նաև հողային աշխատանքների(փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվելու է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը,

- տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

**9.2 Հողային ռեսուրսներ**.

Գործունեության իրականացման հետևանքով կատարվելու են հողային աշխատանքներ, որի արդյունքում առաջանալու է 402մ$^3$ ծավալի հող: Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է ճանապարհին,

- ճանապարհից դուրս տեղակայվող սարքավորումների վայրում փռվելու է ավազ կամ մանրախիճ,

- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,

- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,

**9.3 Ջրային ռեսուրսներ**.

Սևանա լճի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով կառուցապատումը կատարվելու է առաջնորդվելով ՀՀ ջրային օրենսգրքի և ջրային ոլորտին առնչվող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, ինչպես նաև Սևանա լիճ վտանգավոր նյութերի արտահոսքը բացառելու նպատակով նախատեսվում է.

- բացառել Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները,

- բացառել Սևանա լճի ջրի հոսքի, հատակի, ափի փոփոխությունները,

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- անձրևաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսվելու է պլաստմասե տարա, որն օգտագործվելու է տարածքի ջրցանման նպատակով,

- պարզարանում հավաքված տիղմը հեռացվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ աղբավայր,

- անիվների լվացման հոսքաջրերն ուղղորդվելու են բիոզուգարան,

- բացառվելու է տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը շինհրապարակում,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար բետոնախառնուրդը չի նախատեսվում:

**Շինարարության փուլու կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է**.

- Սևանա լիճ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից,

-բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

**Շահագործման փուլում՝**

- կեղտաջրերի հեռացումը և մաքրումը կատարվելու է բացառապես մաքրման կայանների միջոցով: Այդ նպատակով տեղադրվելու է «Եվրոլոս-200» տեսակի 1 հատ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է՝ ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, ԹՔՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ:

Շահագործման փուլում մաքրման կայանի օդափոխման խցում կուտակված տիղմը պարբերաբար հեռացվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից, պայմանագրային հիմունքներով:

**9.4 Կենսաբազմազանություն.**

Նախատեսվող գործունեությունը կազմակերպվելու է այնպես, որպեսզի չհատվեն և չվնասվեն գոյություն ունեցող ծառերը: Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .

- գոյություն ոնեցող ծառեր պահպանում,

- բազմամյա տնկիների աճեցման, բույսերի նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով՝ բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործման բացառում,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են «Սևան»ԱՊ-ին,

- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,

- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- հնարավորինս նվազեցնելու են տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

**9.5 Թափոններ.**

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չի նախատեսվում,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու են մասնագիտացված կազմակերպությունների կողմից,

- կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում:

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

**9.6 Աղմուկ և թրթռում.**

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները:

**9.7 Արտակարգ իրավիճակներ.**

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- շինհրապարակն ապահոված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,
- շինարարության և շահագործման փուլերում տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

**9.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.**

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,
- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- աշխատողներն ապահոված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն),
- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության

պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ), որը ապահոված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով:

**Շահագործման փուլ.**

- հանրային լողափն ապահոված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

- աշխատողներն ապահոված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով:

**9.9 Սոցիալական**.

Հանգստյան գոտու կառուցումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն.

- բացվելու են նոր աշխատատեղեր՝ 30-35 մարդու համար, նպաստելով համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,

- նպաստելու է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը:

**9.10 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում.**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

-շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,

-շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը,

- պահպանվելու է լճի բնական էկոհամակարգը,

-բացառվելու է լճի ափի փոփոխությունները,

-կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

**Կանաչապտում**.

- կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման միջոցով: Տնկվելու են տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ՝ «Սևան»ԱՊ-ի հետ համաձայնեցված բարեկարգման և կանաչապատման նախագծի:

Հողամասը ցանկապատվելու է թույաներով:

10.**Մոնիթորինգ.**

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- կատարվելու են Սևանա լճի ջրի և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- շինանյութերի գնում՝ արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը,
- տարածքը կառուցապատվելու է ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան,
- ապահովելու է հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան,
- թափոնների տեղափոխումը կազմակերպվելու է համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտայինն միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում:

**11. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **1** | **Օդային ավազան** | Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,<br>- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,<br>-բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,<br>- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,<br>- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը,<br>- տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,<br>- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը: | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **2** | **Հողային ռեսուրսներ** | Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.<br>- շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա,<br>- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվում,<br>- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,<br>- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,<br>- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում, | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |
| **3** | **Ջրային ռեսուրսներ** | Գործունեության իրականացման շինարարության փուլում Սևանա լճի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.<br>- բացառել Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները,<br>- բացառել Սևանա լճի ջրի հոսքի, հատակի, ափի փոփոխությունները,<br>-փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Շահագործման փուլ** | հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,<br>- անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման համար նախատեսվելու է պլաստմասե տարա,<br>- բացառվելու է տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը շինհրապարակում,<br>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում,<br>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը ստանալու են տեղում՝ հատուկ մետաղյա տարաներում՝ ջրային ռեսուրսների մեջ հոսքաջրերի ներթափանցումը կանխելու նպատակով:<br><br>**Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.**<br>- Սևանա լիճ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից,<br>- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:<br><br>Շահագործման փուլում տեղադրվելու է<br>-«Եվրոլոս 200» տեսակի 1 հատ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մաքրման կայան, որն ապահովելու է. <br> - ԹԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, ԹՔՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ նորմերին համապատասխանություն: | | |
| **4** | **Կենսաբազմազանություն** | Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է . <br> - բազմամյա տնկիների աճեցման, բույսերի նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործման բացառում, <br> - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են «Սևան»ԱՊ-ին, <br> - գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան** <br> **«Սևան»ԱՊ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,<br>- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,<br>- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,<br>- հնարավորինս նվազեցվելու են տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով: | | |
| **5** | **Թափոններ** | Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,<br>- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չի նախատեսվում,<br>- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,<br>- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու են մասնագիտացված կազմակերպությունների կողմից,<br>- կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,<br>- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,<br>- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում,<br>- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | **Աղմուկ և թրթռում** | Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.<br>- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,<br>- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,<br>- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները: | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |
| 7 | **Արտակարգ իրավիճակներ** | Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.<br>- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,<br>- շինարարության և շահագործման փուլերում տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաքեր՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,<br>- մթնոլորտային տեղումների, քամու | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,<br>- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: | | |
| **8** | **Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն** | Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.<br>- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,<br>- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողներն, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,<br>-աշխատողներն ապահոված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն),<br>- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ, | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Շահագործման փուլ.** | - աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ), որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և այլն), <br> - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, <br> - վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, <br> - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, <br> - պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը: <br><br> - հանրային լողափ ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, <br> - աշխատողներն ապահոված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **9** | **Սոցիալական** | Հանգստյան գոտու կառուցումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն.<br>- բացվելու են նոր աշխատատեղեր՝ 30-35 մարդու համար, նպաստելով համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,<br>- նպաստելու է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը: | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |
| **10** | **Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում** | Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.<br>-շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,<br>-շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը:<br>- պահպանվելու է լճի բնական էկոհամակարգը,<br>- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ.<br>**Կանաչապտում.**<br>- կանաչապատման աշխատանքները կատարվելու են կանաչ խոտի ցանքսի և ծառատնկման միջոցով: Տնկվելու են տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ: | **Կապալառու** | **Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |

## 12.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

| հհ | Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Վայրը | Իրականացման ձևը | Ժամանակամիջոց | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | Շինարարության ընթացքում ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելում | Սևանա լճի ջրի և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,<br>-կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում | Գործունեության ենթակա տարածքում | Տեսողական դիտարկումներ<br>ստուգումներ | Շինարարության փուլում<br>Շահագործման փուլում | **Կապալառու**<br>**«Սևան»ԱՊ**<br>**Համապատասխան գերատեսչական մարմին**<br>**«Սևան»ԱՊ** |
| **2** | **Աշխատանքի անվտանգություն** | -Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն<br>-հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան: | Գործունեության իրականացման ենթակա տարածքում | ստուգումներ | Շինարարության ընթացքում | **Քաղաքացի Իլոնա Հարությունյան**<br>**«Սևան»ԱՊ** |
| **3** | **Նյութեր** | Շինանյութերի գնում | Լիցենզավորված | Մատակարարման | Շինարարության | **Կապալառու** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը: | կազմակերպություններ ի պահեստներ | ընթացքում | փուլում | |
| **4** | **Թափոն** | Թափոնների կանոնավոր տեղափոխում: | Գործունեության ենթակա տարածքից | համապատասխան պայմանագրերի հիման վրա | Շինարարության ընթացքում | **Կապալառու** |
| **5** | **Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ** | - շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտայինն միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղման իրականացում: | -շինհրապարակ - շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: | | Շինարարարական աշխատանքների կատարման ընթացքում | **Կապալառու** |

## Օգտագործված հապավումները

**ՇՄ** նախարարություն՝ շրջակա միջավայրի նախարարություն

**ՇՄԱԳ՝** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

**ԲՀՊՏ՝** Բնության հատուկ պահպանվող տարածք

**ՍՊԸ՝** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

**ՊՈԱԿ՝** Պետական ոչ առևտրային կազմակերպություն

**Սևան ԱՊ՝** «Սևան» ազգային պարկ

**(ԼԳ)՝** Լողափի գոտի

## Գրականություն


1. СП 31.13330.2012 ՍՆիՊ 2.04.02-84* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:
2. ՀՀ կառավարության 01.12.2005թ. N 2128-Ն որոշում:
3. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույց:
4. ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9 սեպտեմբերի 2020 թ. ք. Երևան N 335-Ն Հ Ր Ա Մ Ա Ն ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
6. Լճաշեն գյուղական համայնքի զարգացման 5-ամյա ծրագիր՝ 2016-2021թթ.
7. «Սևան»ԱՊ-ի կառավարման պլան:
8. ՀՀ կառավարության 30.09. 2020թ. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնական զարգացման և օգտագործման 2020թ.միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասի» թիվ 1293-Լ որոշում:
9. «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ:

№ 5 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ 2022/01

ք. Սևան « 14» «հունիս» 2022թ.

Շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պ/կ Կ. Մնացականյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կողմ 1, մի կողմից, և ք. Երևան, Աղ. Սերոբի 11/2, բն.22-ի բնակիչ Իլոնա Էդուարդի Հարությունյանը՝ անձնագիր՝ AN0424829, տրվ. 28.03.2013թ.-ին, 004-ի կողմից, այսուհետ՝ Կողմ 2, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Կողմ 1-ը պարտավոր է վճարի դիմաց Կողմ 2-ին տրամադրել Սևան համայնք, Լճաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Սևան-Գավառ ավտոմայրուղուց դեպի լիճ ընկած ափամերձ հատվածում գտնվող ՀՀ Կառավարության 07 հունիսի 2012թ.-ի №752-Ն որոշմամբ սահմանված № 5 հանրային լողափը՝ Կողմ 2-ի կողմից ներկայացված նախագծին և ներդրումային ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) համապատասխան բարեկարգում, կահավորում և սպասարկում իրականացնելու նպատակով:

1.2. №5 հանրային լողափի բարեկարգումը, կահավորումը և սպասարկումն իրականացվում է Ծրագրով սահմանված ժամանակացույցին, ծավալներին և ժամկետներին համապատասխան :

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Կողմ 1-ն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կողմ 2-ի կողմից Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքը, որակը և համապատասխանությունը Ծրագրին՝ առանց խոչընդոտելու Կողմ 2-ի գործունեությանը.

2.1.2. Եթե իրականացվել է Ծրագրին չհամապատասխանող աշխատանքներ և գործունեություն՝ պահանջել Կողմ 2-ից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

**2.2. Կողմ 1-ը պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Ծրագրին համապատասխան իրականացված աշխատանքների արդյունքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կողմ 2-ին՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ թերությունները շտկելու համար:

**2.3. Կողմ 2-ը իրավունք ունի՝**

2.3.1. Ծրագրով նախատեսված գործունեությանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

**2.4. Կողմ 2-ը պարտավոր է՝**

2.4.1. Ապահովել Ծրագրի իրականացումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը :

2.4.3. Լողափում տեղադրել տեղեկատվական ցուցանակներ, նշելով՝

ա. հանրության կողմից պարտադիր պահպանման ենթակա կանոններն ու պահանջները,
բ.անվճար ծառայությունների ցանկը,

գ. առաջին օգնության և փրկարարական ծառայության վերաբերյալ տեղեկատվություն (թեժ գիծ),

դ. լողափի սխեման և լողալու գոտու խորությունը,

ե. լողափը սպասարկող կազմակերպության վերաբերյալ տվյալներ:

2.4.4. Տարածքում անվճար կազմակերպել կամ տրամադրել՝

ա. հանգստացողների ազատ մուտք,

բ. ավտոկայանատեղի,

գ. խաղահրապարակ,

դ" հանդերձարաններ,

ե" սանհանգույցներ,

զ" շվաքարաններ

է" ցնցուղարաններ:

2.4.5. Կողմ 1-ին փոխհատուցել Կողմ 2-ի կողմից իրականացված գործունեության համար ծախսված և Կողմ 1-ի կողմից վճարված №5 հանրային լողափի էլ. էներգիայի, ջրի, հողի հարկի և նմանատիպ այլ ծախսերը:

2.4.6. Վճարել Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված վճարը:

2.4.7. Ըստ անհրաժեշտության, ապահովել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով փորձաքննական դրական եզրակացության ստացումը :

2.4.8. Ըստ անհրաժեշտության, սահմանված կարգով ապահովել ջրօգտագործման թույլտվության առկայությունը:

2.4.9. Ապահովել տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը՝ պայմանագիր կնքելով աղբահանության իրականացնող կազմակերպությունների հետ կամ տարածքի մաքրությունն ու աղբահանությունն իրականացնել սեփական միջոցներով:

2.4.10. Ապահովել լողափի ենթակառուցվածքների անխափան աշխատանք:

2.4.11. Ապահովել կեղտաջրերի լոկալ մաքրման կայանների (այդ թվում՝ սեպտիկ հորեր) տեղադրումը, սանհանգույցների առկայությունը:

2.4.12. Ապահովել տարածքը խմելու և կենցաղային ջրով:

2.4.13. Բացառել լողափի շահագործումը առանց անվտանգության, ջրափրկարարական ծառայության և բուժկետի:

2.4.14. Տարածքում չկառուցել հիմնական շինություններ, ինչպես նաև նախագծով չհաստատված այլ շինություններ:

2.4.15. Լողափը բարեկարգել, կահավորել և սպասարկել հայտով ներկայացված նախագծին և ներդրումային ծրագրին համապատասխան:

2.4.16. Լողափը կահավորել և շահագործել ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի №1563-Ն որոշմամբ սահմանված լողափերի և բուֆերային գոտիների կահավորման ու սարքավորումներով ապահովման պահանջներին համապատասխան:

2.4.17. Լողափի ջրային տարածքում լողամիջոցների մուտքն ու շահագործումն իրականացնել ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի №1945-Ն որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան՝ մինչև 01.08.2022թ-ը 7 000 000 ՀՀ դրամ, 01.08.2022թ-ից մինչև 01.08.2024թ.-ը 17 000 000 ՀՀ դրամ:

2.4.18. Ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2009թ. ապրիլի 16-ի №06-Ն հրամանով հաստատված հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջները:

2.4.19. Չիրականացնել ՀՀ օրենսդրությանը հակասող, պայմանագրով և/կամ ներկայացված ներդրումայնին ծրագրում չնախատեսված գործողություններ:

## 3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ

3.1 Կողմ 1-ին փոխհատուցել Կողմ 2-ի կողմից իրականացված գործունեության համար ծախսված և Կողմ 1-ի կողմից վճարված №5 հանրային լողափի էլ. էներգիայի, ջրի, հողի հարկի և նմանատիպ այլ ծախսերը՝ ամսական կտրվածքով, պայմանագրի կնքումից հետո յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 15-ից ոչ ուշ:

3.2 Սույն պայմանագրով տարեկան վճարը կազմում է 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.3 Պայմանագրի կնքման օրվանից 2 տարի Կողմ 2-ը ազատվում է սույն Պայմանագրի 3.2-րդ կետով նշված վարձավճարը վճարելու պարտավորությունից:

3.4 Ընթացիկ վճարումները կատարվում են մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.5 Պայմանագրով վճարումները կատարվում են Կողմ 1-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.6 Ժամկետանց պարտավորությունների մարումն իրականացվում է հետևյալ կերպ՝ սկզբում մարվում է Պայմանագրով սահմանված տույժը, հետո՝ մայր գումարը.

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կողմ 2-ը պատասխանատվություն է կրում Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

4.2 Ծրագրով նշվածին չհամապատասխանող սպասարկում իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կողմ 2-ից գանձվում է տույժ՝ պայմանագրի 3.2 կետով նախատեսված գումարի 0,05 տոկոսի չափով:

4.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1 **Պայմանագիրը դադարում է.**

5.1.1 Կողմ 2-ի մահվան դեպքում,

5.1.2 Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում,

5.1.3 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

5.2 Սույն Պայմանագիրը կարող է Կողմ 1-ի կամ Կողմ 2-ի նախաձեռնությամբ լուծվել այդ մասին առնվազն 30 օրացուցային օր առաջ մյուս կողմին ծանուցելով:

5.3 **Կողմ 1-ի նախաձեռնությամբ Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել,** այդ մասին առնվազն 7 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով Կողմ 2-ին, եթե՝

5.3.1 Կողմ 2-ն էականորեն խախտել է պայմանագրի կամ Ծրագրի դրույթները: Կողմ 2-ի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) իրականացրել է Ծրագրում նշված աշխատանքներին, ժամանակացույցին, ծավալներին և ժամկետներին չհամապատասխանող գործունեություն:

բ) խախտել է սույն պայմանագրի 2.4.1-ից 2.4.19-րդ կետի պահանջներից որևէ մեկը:

գ) Վճարման ժամկետը լրանալուց հետո 60 օր ուշացրել է սույն Պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված վճարումներից որևէ մեկը:

5.4 Կողմ 2-ի նախաձեռնությամբ Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել՝

5.4.1 Եթե Կողմ 1-ը խոչընդոտներ է ստեղծել լողափը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

## 6 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Պայմանագիրը կնքվում է 7 տարի ժամկետով:

6.2 Պայմանագրի ժամկետի ավարտից հետո Կողմ 2-ը տվյալ տարածքում նույնատիպ գործունեություն իրականացնելու դեպքում նոր պայմանագիր կնքելու նախապատվության իրավունք ունի:

## 7 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կողմ 2-ը պատասխանատվություն է կրում Ծրագրով և Պայմանագրով նախատեսված պահանջների խախտման համար:

7.2 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.4 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից. կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Ծրագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Կողմ 1**
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ք.Սևան, Կարմիր բանակի 56
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018002890
ՀՎՀՀ 08602899
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն պ/կ Կ. Մնացականյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**Կողմ 2**
Իրինա Էդուարդի Հարությունյան

Հասցե՝ ք. Երևան, Աղ. Սերոբի 11/2, բն.22

Անձնագիր՝ անձնագիր՝ AN0424829, տրվ. 28.03.2013թ.-ին, 004-ի կողմից

*Ի. Հարությունյան*

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2.

Ճարտարապետահատակագծային առաջադրանք

ձև N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք

(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 93 21 «դեկտեմբերի» 2022 թ.

Օբյեկտ ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 7-ի N752-Ն որոշմամբ առերծված Լճաշենի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

IV կատեգորիա աշխատաքային նախագծային փաստաթղթերի մշակման համար։

ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Լճաշեն բնակավայրի ափամերձ հատված

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող «Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Հայտ՝ 14.12.2022թ. սեփականության իրավունքի վկայական 2626876

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը երկու տարի

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրի՝ հատուկ պահպանվող գոտի

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — 1.37հա

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը — Ռելեֆը հարթ

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — Սևան-Գավառ մայրուղի

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. [illegible] ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) ______________________________ Չկա

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր ______________________________ «Սևան» ԱՊ-ի հողատարածքներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ՀՀ կառավարության 18.12.2008թ. N 1563-Ն որոշմամբ սահմանված 2-րդ ենթագոտի

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ ______________________________ Չկա

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

***(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)***

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Նախագծել հանգստի գոտի ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին համապատասխան:
Տարածքի բարեկարգումը նախագծել պահպանելով գործող նորմերը:
Հողամասի հիմնական մասը սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզով գնահատվում է A=0.4-0.6 մ/վ²:

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, տվյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կարգավորված (կարգավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) ______________________________ Ըստ գործող նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) ______________________________ Ըստ գործող նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին

9.7. այլ պահանջներ ______________________________ Չկա

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ______________________________ Կարգավիճակը չճշտված շինության ապամոնտաժում

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ______________________________ Համաձայն նախագծի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

մատակարարում — [illegible]
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է ______ Համաձայն տեխ. պայմանի
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է ______ Չկա
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներտանցալ դիտահորը) տեղադիրքը — Կցվում է ______ Չկա
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ — ______ Չկա

12.6. արբանյակություն — ______ Համաձայն պայմանագրի

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — ______ Հնարավորինս պահպանել բնական լանդշաֆտը
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին համապատասխան
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — ______ Շինարարական ստանդ. համապատասխան
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ — ______ Չկա
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — ______ Համաձայն՝ ՀՀՇՆ 21-01-2014
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — Համաձայն՝ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 /ՄՍՆ 3.02-05-2003

19. Շրջակա միջավայրի պահպանում — ______ Համաձայն գործող նորմերի
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցություններից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — ______ Համաձայն գործող նորմերի
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — ______ Երկու տարի. նախագիծ
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Համալիր փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Չկա

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի N660 որոշմամբ սահմանված կարգով

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Չկա

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Ըստ գործող նորմերի

27. Այլ պայմաններ

Չկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ ______________ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Հավելված 3.

Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ



Հավելված 4.




| N | ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ | | ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐ Մ. |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8496509.8381 | 4486594.9958 | 152.70 |
| 2 | 8496506.0326 | 4486442.3433 | 72.5 |
| 3 | 8496433.6984 | 4486437.4439 | 16.0 |
| 4 | 8496431.8794 | 486453.3402 | 30.50 |
| 5 | 8496417.2348 | 4486480.0944 | 20.50 |
| 6 | 8496405.3152 | 4486496.7729 | 51.00 |
| 7 | 8496391.4334 | 4486545.8473 | |
| | | | |

| N | ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ | | ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐ Մ. |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8496509.8381 | 4486594.9958 | 152.70 |
| 2 | 8496506.0326 | 4486442.3433 | 72.5 |
| 3 | 8496433.6984 | 4486437.4439 | 16.0 |
| 4 | 8496431.8794 | 4486453.3402 | 30.50 |
| 5 | 8496417.2348 | 4486480.0944 | 20.50 |
| 6 | 8496405.3152 | 4486496.7729 | 51.00 |
| 7 | 8496391.4334 | 4486545.8473 | |
| | | | |

Հավելված 5.

# Աղբահեռացման պայմանագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀԳեղարքունիքիմարզ, Սևանհամայնք, ք. Սևան, Նաիրյանփ. 164, 1501
Հեռ. (0261) 4-00-01, (0261) 2-43-23
Կայք sevancity.am
Էլ. փոստ sevan.gegharquniq@mta.gov.am

*10 ապրիլի 2023թ.*

N [illegible]/708

««ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ- Ի
ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ ՊԱՐՈՆ Կ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր Սևան համայնքի ղեկավարի 06.04.2023թ. գրության հայտնում ենք, որ թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման արդյունքում առաջացած շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել Չկալովկա բնակավայրի աղբավայր:Իսկ կենցաղային աղբի տեղափոխումը պետք է կատարվի <<Սևան համայնքի Կոմունալ տնտեսություն և բարեկարգում>>ՀՈԱԿ-ի միջոցով, համապատասխան պայմագրի առկայությամբ:

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատ.՝ քաղ-շին և հող-շին. բաժին
Հեռ. 0261 4-00-07

Հավելված 7.

## Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկը

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

04.04.2023թ

Սևան համայնք Լճաշեն բնակավայր

2023թ ապրիլի 04-ին ժամը 15:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում(1-ին փուլ):

Հանրային քննարկմանը ներկա էին <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Սևանի համայնքապետարանի ներկայացուցիչներ, բնակավայրի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը, ՇՄԱԳ մասնագետ՝ Հրանուշ Ալեքսանյանը, կապալառու՝ Վահե Հարությունյանը, արձանագրում էր՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Շուշանիկ Մուրադյանը:

Լսեցին՝

ՇՄԱԳ մասնագետ Հրանուշ Ալեքսանյանին.

Նա ներկայացրեց համայնքի վարչական սահմաններում թիվ 5 հանրային լողափի նախատեսվող աշխատանքների իրականացման ծրագիրը: Խոսեց բնապահպանական հարցերի պահպանման վերաբերյալ, ինչպես նաև նախատեսվող սեպտիկ հորի վերաբերյալ:

Ելույթ ունեցավ կապալառու Վահե Հարությունյանը՝ ներկայացնելով նախնական նախագիծը՝ կառուցվելիք հանրային լողափը:

-Մենք աշխատում ենք օրենքին համապատասխան, Լսումներն էլ նշակվել են՝ համաձայն այդ կարգավորումների: Ներկայումս ծրագիրը գտնվում է փորձաքննության փուլում: Քննարկման մասնակիցները կարող են իրենց <<Դեմ>> և <<Կողմ>> կարծիքները արտահայտել, որոնք հաշվի կառնվեն փորձաքննության ընթացքում: Անհրաժեշտ է կարծիքները հիմնավորել և լսել միմյանց:

Ելույթներ ունեցան համայնքի բնակիչներ Հակոբ Թադևոսյանը, Անդրանիկ Հակոբյանը, Գոռ Մելիքյանը և այլ անձինք:

Ընդհանուր կարծիքը կողմ էր, սակայն Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վ. Մարգարյանի կողմից առաջարկվեց պայմանագրում կետ ներառել, որով պայմանագրի Կողմերը կպարտավորվեն լողափի աշխատելու ընթացքում առաջացած որոշակի շահույթից Լճաշեն բնակավայրում իրականացնել որևէ սոցիալական ծրագիր(մանկապարտեզում, արվեստի դպրոցում և այլն), ինչին միանշանակ կողմ արտահայտվեցին ինչպես Լճաշեն բնակավայրի բնակիչները, այնպես էլ մասնակից կազմակերպությունների անդամները:

Բնակիչների կողմից առաջարկվել է նաև լողափում ստեղծվելիք աշխատատեղերի առաջնահերթությունը տալ Լճաշեն բնակավայրի բնակիչներին:

Չնայած վարձակալող կողմի նշած ծառատունկ կատարելու պարտավորությանը՝ բնակիչների կողմից առաջարկվել է կատարել ծառատունկ՝ Կողմի հնարավորության սահմաններում:

Վերնոշված մինիմալ պայմանների ապահովման դեպքում՝ բնակավայրի բնակիչների կարիծիքը լինելու է դրական:

Ինչպես վարչական շրջանի ղեկավարության, այնպես էլ բնակիչների պահանջն է, որպեսզի առաջիկայում կայանալիք հանրային լսման ժամանակ Կողմերը ներկայացնեն փոփոխված պայմանագիրը, և վերոնշված պահանջների վերաբերյալ դրական կամ բացասական պատասխան:

Կից ներկայացվում է տեսաձայնագրությունը և մասնակիցների ցուցակը:

Վարող՝

Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար

Վահան Մարգարյան____________________

Արձանագրող՝

Սևանի համայնքապետարանի

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

Շուշանիկ Մուրադյան____________________

## ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն Որոշման համաձայն

**Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ**

**04.04.2023թ. (15.⁰⁰)**

| Հ/Հ | Անուն, Ազգանուն | Աշխատանքի վայր /բնակության հասցե հեռ. համար | Ստորագրություն |
|---|---|---|---|
| 1. | [illegible] | [illegible] | [signature] |
| 2. | [illegible] | [illegible] | [signature] |
| 3. | [illegible] | գ. Լճաշեն | [signature] |
| 4. | [illegible] | [illegible] | [signature] |
| 5. | [illegible] | [illegible] | [signature] |
| 6. | [illegible] | [illegible] | [signature] |
| 7. | [illegible] | [illegible] | [signature] |
| 8. | [illegible] | գ. Լճաշեն [illegible] | [signature] |
| 9. | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | [illegible] | [illegible] | [signature] |
| 11. | [illegible] | [illegible] | [signature] |
| 12. | [illegible] | [illegible] | [signature] |
| 13. | [illegible] | [illegible] | [signature] |
| 14. | [illegible] | [illegible] | [signature] |
| 15. | [illegible] | [illegible] | [signature] |
| 16. | [illegible] | [illegible] | [signature] |
| 17. | [illegible] | [illegible] | [signature] |
| 18. | | | |
| 19. | | | |
| 20. | | | |
| 21. | | | |
| 22. | | | |
| 23. | | | |
| 24. | | | |
| 25. | | | |
| 26. | | | |
| 27. | | | |

Հավելված 8.

Համայնքի նախնական համաձայնությունը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀԳեղարքունիքիմարզ, Սևանհամայնք, ք. Սևան, Նաիրյանփ. 164, 1501**
**Հեռ.** (0261) 4-00-01, (0261) 2-43-23
**Կայք** sevancity.am
**Էլ. փոստ** sevan.gegharquniq@mta.gov.am

*14 ապրիլի 2023թ.* N 01-1/742

**««ՍԵՎԱՆ » ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ- Ի**
**ՏՆՕՐԵՆ Ի Պ/Կ ՊԱՐՈՆ Կ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մնացականյան

Ի պատասխան Ձեր՝ 06.04.2023թ.-ի Սևան համայնքի ղեկավարին հասցեագրված N 19-848 գրության՝ հայտնում ենք, որ Սևանի համայնքապետարանը տալիս է իր նախնական համաձայնությունը Սևան համայնքի Լճաշեն թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման վերաբերյալ:

Միաժամանակ առաջարկում ենք՝ հետագա աշխատանքները կազմակերպելիս հաշվի առնել ս/թ ապրիլի 4-ին կայացած հանրային լսման ընթացքում ներկայացված առաջարկները և դիտարկումները:

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կատ.՝ քաղ-շին և հող-շին. բաժին
Հեռ. 0261 4-00-07